

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Աղմուկ՝ Վասն Ոչինչի

Անցեալ շաբթուայ ընթացքին Երևանի մէջ կայացաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի հերթական նիստը, որուն գլխավոր օրակարգը դարձեալ եղաւ 44-օրեայ պատերազմի օրերուն աշխարհասփիւռ հայութեան կողմէ նուիրաբերուած աւելի քան 200 միլիոն տոլարի մօտ կէսը պետական պիտոճէ փոխանցուելու պարագան, որուն շուրջ կը շարունակուի ատեն-ատեն աղմուկ բարձրանալ տարբեր շրջանակներէ:

Այս հարցին առաջինը բողոքած էր Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան, այն օրերուն երբ ընդդիմութիւնը փողոց դուրս եկած էր վարչապետի հրաժարականի պահանջով եւ Նախագահը եւս միացած էր հրաժարականի կոչերուն եւ հաւանաբար կը փորձէր այդպիսով իր «ճերմակները» ունենալ այդ արշալիւն մէջ:

Հոգաբարձուներու Խորհուրդի բազմաթիւ անդամներ հրապարակաւ յայտարարեցին, թէ այդ փոխանցումը եղած է իրենց գիտակցութեամբ եւ Հիմնադրամի ու Կառավարութեան միջեւ ստորագրուած համաձայնութեամբ: Հակառակ ասոր, ընդդիմադիր ուժերը անմիջապէս կանչեցան Արմէն Սարգսեանի խօսքերուն ու կը շարունակեն շահագործել զայն հակա-Փաշինեան իրենց պայքարի ընթացքին:

Տասը տարի երկիրը միանձնեայ ղեկավարած, օլիգարխիկ համակարգի հիմնադիրը նկատուող ու կաշառակերութեան համար այս օրերուն դատարանի առջեւ կանգնած Ռոբերդ Քոչարեան նամակ յղած է Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդին, ըսելու համար որ, կը մերժէ մասնակցիլ նիստին ու վաւերացնել կատարուած «ապօրինութիւնը»: Իսկ, Դաշնակցական պատգամաւոր մը կը յայտարարէ թէ, այդ գումարը «գրպանած» են: Նախ պէտք է յիշեցնել նմաններուն, որ գրպանել կը նշանակէ իւրացնել կամ մէկու մը սեփականութիւնը դարձնել: Պետական պիտոճէ մուտքագրուած գումարին կարելի չէ նման բնութագրում տալ՝ անցնելով պարկեշտութեան բոլոր սահմանները:

Չուզահեռ, Ազգային ժողովի ընդդիմադիր՝ «Հայաստան» դաշինքը եւս լծուած է Հիմնադրամին շուրջ անվստահութիւն սերմանելու գործին: Անոնք ստեղծած են խորհրդարանական քննիչ յանձնաժողով՝ ուսումնասիրելու համար Հիմնադրամէն պիտոճէ փոխանցուած միջոցներու օգտագործումը:

Սոչիի Եռակողմ Յայտարարութեամբ Հերքուած ԵՆ «Միջանցքի» Մասին Քարոզչական Թէզերը. ԱԳՆ

«Սոչիի եռակողմ յայտարարութեամբ կողմերը վերահաստատում են իրենց պարտաւորութիւնը 2020թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան բոլոր դրոյթներին հետեւողական եւ անվերապահ իրականացման վերաբերեալ»: Այս մասին նշած է ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութեան մամուլի քարտուղար՝ Վահան Յունանեան՝ ի պատասխան Նոյեմբեր 26-ին Սոչիի եռակողմ յայտարարութեան վերաբերեալ լրատուամիջոցներու հարցերուն:

«Սա վերաբերում է նաեւ Ատրպէյճանի կողմից մինչ այժմ չկատարուած, Նոյեմբերի 9-ի յայտարարութեան 8-րդ կէտով ամրագրուած՝ ռազմագերիների, պատանդների եւ այլ պահուող անձանց վերադարձին եւ այլ կէտերով չկատարուած պարտաւորութիւններին: Նոյեմբերի 26-ի Սոչիի յայտարարութեամբ եւս մէկ անգամ վերահաստատում է Յունուարի 11-ի յայտարարութեամբ արձանագրուած տարածաշրջանում փոխադրային բոլոր ուղիների ու տնտեսական կապերի ապաշրջափակման դրոյթը եւ հերթական անգամ հերքում են «միջանցքի» կամ միջանցքային տրամաբանութեան մասին տարածուող քարոզչական թէզերը», - նշած է ԱԳՆ մամուլի քարտուղարը:



Փութին, Ալիև եւ Փաշինեան Սոչիի մէջ կայացած եռակողմ հանդիպում ընթացքին

լուր քարտուղարը: Վահան Յունանեան ընդգծած է նաեւ, որ ըստ յայտարարութեան, պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է հայ-ատրպէյճանական սահմանին կայունութեան եւ անվտանգութեան մակարդակը բարձրացնելուն ուղղուած քայլեր ձեռնարկել: Իսկ այդ ուղղութեամբ առաջնային ու աւելի կարեւոր քայլը պէտք է ըլլայ լարուածութեան նուազեցման միտուած քայլերու իրագործումը: «Համոզուած ենք նաեւ, որ

եռակողմ յայտարարութիւնների դրոյթների լիարժէք կեանքի կոչումը կը նպաստի Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը՝ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեան մանտաթի ներքոյ», - աւելցուցած է Վահան Յունանեան: Նոյեմբեր 26-ին Սոչիի մէջ տեղի ունեցաւ Փութին-Ալիև-Փաշինեան եռակողմ հանդիպումը, որու աւարտին հրապարակուեցաւ մի

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Գոհաբանութեան Օրուան Թելեթոնի Ընթացքին Հանգանակուած է \$12,351,000



«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Գոհաբանութեան Օրուայ 24րդ տարեկան Միջազգային Թելեթոնը ի մի բերաւ աշխարհասփիւռ հայութիւնը, կոչ ուղղելով շարունակական աջակցութիւն ցուցաբերել հայրենիքի վերականգնման, միաժամանակ հաշուետուութիւն ներկայացնելով անցեալ 12 ամիսներուն իրականացուած ծրագիրներու մասին: «Վերակառուցել հայրենիքի հեռաւոր համայնքները» նշանաբանով, Թելեթոնը օժանդակութիւն ապահովեց 44օրեայ պատերազմէն

տուժած Հայաստանեան ու Արցախեան բազմաթիւ համայնքներու, ներառեալ մօտ 100,000 տեղահանուած ու բռնազաղթուած անձերու համար: Թելեթոնը տեղի ունեցաւ Նոյեմբեր 25ին, Լոս Անճելըսի մէջ: Չորս-ժամեայ ձեռնարկին ընթացքին ելոյթ ունեցան համայնքային ղեկավարներ եւ դպրոցներու ու կազմակերպութեան ներկայացուցիչներ, եւ սփռուեցան կարճ վաւերագրականներ՝ ամբողջացուած ծրագիրներու, հայրենի-

Յայտարարութիւն «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը լսեց «Մենք ենք, մեր սահմանները» համազգային դրամահաւաքի շրջանակներում հաւաքագրուած եւ 2020 թուականի ընթացքում Հայաստանի Հանրապետութեանը նուիրաբերուած դրամական միջոցների նպատակային օգտագործման վերաբերեալ խորհրդի կողմից ստեղծուած աշխատանքային խմբի, Հիմնադրամի հաշուեքննութիւնն իրականացնող կազմակերպութեան եւ ՀՀ Ֆինանսների նախարարի զեկուցները եւ դրանք ընդունեց ի գիտութիւն: Աշխատանքային խումբը յայտնեց, որ դրամական միջոցների ոչ նպատակային կիրառման մասին հաւաստի որեւէ ապացույց չի ստացել, ինչպէս նաեւ աշխատանքային խումբն ու արտաքին աուդիտորը զեկուցեցին, որ իրական սահմանափակումները խոչընդոտել են ՀՀ կառավարութեան

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Նոր «Կլոունադա» Զին Տրամաբանութեամբ. Նուրբ Սահմաններ Զայաստանում եւ Զայաստանի Շուրջ

ՀԱՅԿ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Ժողովրդավարութեան պաշտպանութեան գազաթնաթողովի ամերիկեան նախաձեռնութեան հանդէպ ՌԴ նախագահի խօսնակ Պեսկովի բացասական գնահատականը Հայաստանում առիթ տուեց խօսելու այն մասին, որ Երեւանի մասնակցութիւնը ԱՄՆ նախագահի կազմակերպած համաժողովին, յարուցելու է կրեմլի դժգոհութիւնը:

Յայտնի է, որ գազաթնաթողովը անցկացուելու է առցանց, թէեւ դրանից ի հարկէ խնդրոյ առարկան չի փոխուում եւ, ինչպէս կ'ասէին օրինակ մեր որոշ մարզական մեկնաբաններ՝ «դժգոհութիւնը մնում է դժգոհութիւն»: Բայց, վերադառնանք քաղաքականութիւն: Իսկ քաղաքականութիւնը ենթադրում է, որ Հայաստանը պէտք է կարողանայ յարաբերուել աշխարհի հետ այնպէս, որ մի ուղղութեամբ խնդիրներ չառաջացնելով, կարողանայ նաեւ խնդիրներ լուծել մէկ այլ ուղղութեամբ կամ ուղղութիւններով: Ըստ այդմ, հայկական քաղաքականութեան ելակէտը պէտք է լինի ոչ թէ այն, թէ՛ կրեմլը դժգոհ է այսինչ կամ այնինչ բանից, կամ կարող է լինել դժգոհ, այլ այն, թէ՛ ինչպէս յաղթահարել հնարաւոր խնդիրներն ու խուսթեղը եւ մի կողմից ընդունել ամերիկեան կարեւոր հրահրեր, միւս կողմից ապահովել այդ առնչութեամբ Ռուսաստանի նորմալ վերաբերմունք, ձեւաւորել վստահութիւն, որ Հայաստանը չի մասնակցում գազաթնաթողովին Մոսկուայի թիկունքում:

քում խաղեր խաղալու համար, այլ մասնակցում է իր համար անվտանգային, ռազմա-քաղաքական, ինչու ոչ՝ նաեւ տնտեսական որոշակի խնդիրներ լուծելու ակնկալիքով, որոնք ամենեւին կասկածի տակ չեն դնում հայ-ռուսական ուղղութեամբ աշխատանքային բարեխճութիւնը:

Ի վերջոյ, եթէ դիտարկենք երեւոյթը որոշակի նախապատմութեամբ, ապա հենց այստեղ էր նաեւ հայկական քաղաքականութեան ձախողումը Եւրաստոցացման հարցում: Պնդել, որ այդ վրիպումը թոյլ չտալու պարագայում կը խուսափէինք այն քաղաքական մարտահրահրից, որ եղաւ 2013-ի Սեպտեմբերին, կը լինի որոշակի մոլորութիւն: Սակայն, Եւրաստոցացման պատմութեան ամենաաղաղակող վրիպումներից մէկն այն էր, որ Հայաստանում ձեւաւորուել էր մի «դիսկուրս», թէ Հայաստանը Եւրաստոցացման գործընթացում ինչ որ գաղտնի պայմանաւորուածութիւններ է քննարկում Եւրամիութեան հետ, որոնք վտանգ են ներկայացնելու Ռուսաստանի համար, հակասելու են Ռուսաստանի շահերին, եւ բարկացնելու են Ռուսաստանին:

Ինչպէս պէտք է պարզուեր աւելի ուշ, իրականում այդ ամէնն ընդամէնը նրա համար էր, որպէսզի որոշ մարզիկ եւ խմբեր, որոշ շրջանակներ «հաշիւ ներկայացնեն» Ռուսաստանին իրենց այդ ծառայութեան համար, որով փաստօրէն ապահովել էին Հայաստանի հանդէպ Ռուսաստանի քաղաքականութեան մի շարք անցանկալի

որոշումների «ալիբի»: Իսկ հաշիւը այն ժամանակ անկասկած իշխանութիւնն էր՝ օգնէք մեզ գալ իշխանութեան եւ լինել Սերժ Սարգսեանից աւելի վստահելի:

Իհարկէ, ի պատասխան դրա, Ռուսաստանը իր այն ժամանակ կրեմլամերձ փորձագէտներից եւ այսպէս ասած ինսայդըրներինց մէկի միջոցով այդ «հաշիւ ներկայացնողներին» անուանեց ոչ աւելի, ոչ պակաս՝ կլոունադայով զբաղողներ: Բայց, այսօր էլ Հայաստանում ըստ էութեան կան «կլոունադայով զբաղողներ», որոնք նոյն տրամաբանութեամբ փորձում են Հայաստանի արտաքին քաղաքական որոշումները վերածել խմբային քաղաքականութեան մանրադրամի, ինչի դերում այսօր էլ դիտարկուում է Ուաշինկթոնի կազմակերպած գազաթնաթողովի մասնակցութիւնը:

Այդ իմաստով, կարելոք է, որ Երեւանը սահմանել է այդ մասնակցութեան իրօրակարգը՝ ատրպէյճանական ազրեյիայի դատապարտում, որովհետեւ այսօր դա է Հայաստանի թիւ մէկ խնդիրն ու հայկական ժողովրդավարութեան թիւ մեկ սպառնալիքը: Իսկ այդ օրակարգը, ի դէպ, տողատակում պէտք է որ «պահանջուած» լինի նաեւ Ռուսաստանի համար, որովհետեւ ընդամէնը մի քանի օր առաջ էլ թուրքիայում Թրքալէզուների գազաթնաթողովն էր, որում խորհրդակցական միաւորումը ստացաւ կազմակերպութեան կարգավիճակ՝ իր հաւակնութիւններով, որոնք շօշափում են նաեւ Ռուսաստանի ազդեցութեան տիրոջները:

«ԵՐԵՒԱՆ ԼՈՒՐ»

Հարցեր Հարցեր Սոչիի Շուրջ

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Փոխվարչապետ Մհեր Գրիգորեանը Նոյեմբերի 29-ին ընդունել է Հայաստանում Ֆրանսայի արտակարգ եւ լիազօր դեսպան Անն Լուչոնին: Դեսպանի հետ քննարկուել են հայ-ֆրանսական յարաբերութեան տարբեր ասպեկտներին վերաբերող հարցեր: Քննարկման առարկայ են եղել նաեւ արցախեան հարցն ու մասնաւորապէս ռեգիոնալ ապաշրջափակման հեռանկարը: Այդպէս կարգուածով Ֆրանսայի դեսպանի կառավարութիւնն այսօր ու փոխվարչապետ Գրիգորեանի հետ հանդիպումը առաւել մեծ ուշադրութիւն է գրաւում Սոչիում Նոյեմբերի 26-ին տեղի ունեցած Փաշինեան-Փութին-Ալիեւ հանդիպումից յետոյ ՌԴ նախագահ Փութինի յայտարարութեան համատեքստում: Փութինը նշեց, որ յաջորդ շաբաթ, այսինքն արդէն ընթացիկ շաբաթ, Մոսկուայում կը հաւաքուեն երեք երկրների փոխվարչապետները եւ մի քանի դետալ ճշգրտելուց յետոյ յայտարարութիւն կ'անեն հաղորդուողների ապաշրջափակման մասին որոշման վերաբերեալ:

Բանն այն է, որ այդ աշխատանքում Հայաստանից ներգրաւուած փոխվարչապետը հենց Մհեր Գրիգորեանն է եւ Ֆրանսայի դեսպան Անն Լուչոնն ըստ երեւոյթին այցելում է կառավարութիւնն հասկանալու համար, թէ ինչ է սպասուում Մոսկուայում, ինչ որոշումների մասին է խօսքը, կամ ինչ

դետալներ են, որ պէտք է ճշգրտուեն: Սահմանակու՞մ է, որ Մինսկի խմբի համախառն Ֆրանսան ունի որոշակի տեղեկացուածութեան խնդիր, թէ՞ Փարիզը պարզապէս փորձում է ընդգծել իր ուշադրութիւնը պրոցեսի նկատմամբ, իսկ գուցէ նոյնիսկ փորձում էր Երեւանի միջոցով փոխանցել ինչ-ինչ գաղափարներ այն դետալների առնչութեամբ, որ քննարկուելու են Մոսկուայում:

Բոլոր դէպքերում, Սոչիի հանդիպումից յետոյ բաւականին նկատելի է թուրք-իրանեան եւ իրանատրպէյճանական յարաբերութեան բաւականին արագ ջերմացում, բարձր մակարդակի հանդիպումներ, տնտեսական պայմանաւորուածութիւններ եւ այլն: Տպաւորութիւն է, որ Սոչիի հանդիպումը այնքան էլ գոհացուցիչ չէ իրանի եւ թուրքիայի համար, եւ գուցէ նաեւ Ատրպէյճանի, որը մի կողմից ստիպուած է եղել չմերժել Փութինին, միւս կողմից բոլորովին դէմ չի լինի, եթէ թուրքիան եւ իրանը կարողանան հասնել Սոչիի պայմանաւորուածութիւնների այսպէս ասած կասեցման: Ինչպէս արդէն նկատել եմ նախորդ հրատարակումներում, իրանի եւ թուրքիայի համար անցանկալի է, եթէ Ռուս-

աստանը արցախեան, հայ-ատրպէյճանական խնդիրների կարգաւորումը իրացնի աւելի շատ Մինսկի խմբի համախառնների, քան իրենց հետ համակարգուած կամ համադրուած: Եթէ իրանն ու թուրքիան կարող են սկսել Սոչիի կասեցնելու գործընթացը, ապա թերեւս կարելոք կը լինի, որ Մինսկի խմբի միւս համախառններն էլ անեն հակառակը: Իհարկէ հասկանալի է, որ նրանք Ռուսաստանի համար չեն «փրկի» ոչ մի Սոչի: Առաւել եւս, որ իրանը, Ատրպէյճանը եւ թուրքիան Եւրոպային ցոյց են տալիս ռուսական գաղի այլընտրանքի ուղղութեամբ շարժ՝ իրանի միջոցով թուրքմենական գաղի սկիզբի արտահանում Ատրպէյճան, ինչն էլ կարող է տեսականում դիտարկուել դէպի Եւրոպա գազամուղի ապրանք: Ինչ կանի այդտեղ Ռուսաստանը՝ կանի՞ աւելի լաւ առաջարկ Արեւմուտքին՝ քաղաքական համակցութեան իմաստով, թէ՞ կը փորձի Եւրոպայից աւելի գրաւիչ լինել իրանի եւ թուրքիայի համար: Հարցերը Սոչիի շուրջ իսկապէս շատ են, իսկ պատասխաններ՝ առայժմ գրեթէ չկան:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

2եր Ծանուցումները Կտաւեցք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՄԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Սիւնիքի Համայնքապետերուն Համար Անհասկնալի Է, Թէ Ինչու «Հրապարակը» Ատրպէյճանամէտ Սուտ Կը Տարածէ

Անցեալ շաբաթ ՀՀ վարչապետի հետ հանդիպած Սիւնիքի համայնքապետերուն համար մինչեւ հիմա անհասկնալի է, թէ ինչու եւ ինչ նպատակով իրենց եւ վարչապետի փակ հանդիպման մասին Hraparak.am-ը ատրպէյճանական կողմին ձեռնտու կեղծ «արտահոսք» տարածած է՝ խեղաթիւրելով իրականութիւնը եւ փորձելով հաստատել ատրպէյճանական թէզերը:

Նշենք, որ անցեալ շաբաթ «Հրապարակը» «Սիւնիքի համայնքապետերի հետ հանդիպմանը Փաշինեանը շնորհակալ էր յայտարարութիւն է արել» վերնագիրով լուր տարածած է, ուր նշուած է, թէ իբր Նիկոլ Փաշինեան Սիւնիքի համայնքապետերու հետ հանդիպման ժամանակ խօսած է Սիւնիքին տրուող «միջանցք-ճանապարհ» եւ Արցախի մասին՝ յորդորելով համայնքապետերը համակերպուիլ այն մտքին հետ, որ «Արցախն ատրպէյճանական է», պարզապէս 30 տարի մենք մեզ խաբած ենք, ու վերջը պէտք է ըլլար այն, ինչ եղաւ:

Civic.am-ը հանդիպման ներկայ պաշտօնատար անձերէն փորձեց պարզել լուրի իսկութիւնը: Վարչապետի խորհրդական, Սիւնիքի հարցերով միջգերատեսչական յանձնաժողովի անդամ՝ Ռոպերթ Ղուկասեանի հետ զրոյցի ընթացքին վերջինս յայտարարեց, որ չի կրնար նման բան ըլլալ: «Այնքան անհեթեթ է այդ ձեւա-

կերպումը, չի կարող նման բան լինել: Տարբեր թեմաներ են քննարկուել, հարցեր բարձրաձայնուել, ինչը, բնականաբար, գաղտնի է, բայց այդ լուրերը կեղծ են: Ի վերջոյ, ներկայ են եղել Սիւնիքի բոլոր համայնքապետերն ու պարտականութիւն կատարողները: Եթէ նման բան լինէր, ըստ ձեզ՝ ինչպէ՞ս կը վերաբերուէին: Ի վերջոյ, չի կարելի: Ամէն ինչին չափ, սահման կայ», - ըսաւ Ռոպերթ Ղուկասեան:

Տեղ համայնքի ղեկավար՝ Դաւիթ Ղուլունցը եւս հերքեց այս խօսակցութիւնները: «Ո՞նց կարող է նման բան լինել: Նման բան չի եղել», - ըսաւ Դաւիթ Ղուլունցը:

Միջանցքի թեմային անդրադառնալով՝ Տեղի համայնքապետը ըսաւ. «Ի՞նչ ինչի՞ է մենակ Hraparak-ը նման բան հրատարակում, ո՞նց կարող է նման բան լինել: «Հրապարակից» իմացէք, ո՞վ է էդ տեղեկատուութիւնը տուել, որ հրատարակել է: Եթէ նման բան չի եղել, ո՞նց են նման բան հրատարակում, ես ներկայ եմ եղել՝ նման խօսակցութիւն չի եղել»:

Ազգային ժողովէն ներս այս լուրը հերքած էր նաեւ Սիւնիքի մարզպետ Մելիքէթ Պողոսեանը՝ նշելով, որ վարչապետը համայնքներու ղեկավարներուն հետ հանդիպման ժամանակ իրական տեղեկատուութիւն հաղորդած է համայնքներու ղեկավարներուն, թէ ինչ է իրավիճակը եւ ինչ կը կատարուի:

Փաշինեան Ներկայ Գտնուած Է Նոր Ելեկտրակայանի Բացման Արարողութեան



Վարչապետ Փաշինեան կը մասնակցի նոր ելեկտրակայանի բացման արարողութեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Երեւանի մէջ մասնակցած է 254 մէկաուտ ՆՊԷԿ-ի հարմարեցումը համակցուած շոգեկազային շրջանառութեամբ նոր ելեկտրակայանի բացման արարողութեան:

Կառավարութեան ղեկավարը «Ռէնկօ» ընկերութեան գլխաւոր գործադիր տնօրէն՝ Ճովաննի Ռուպինի ուղեկցութեամբ շրջայց կատարած է ելեկտրակայանով եւ ծանօթացած կատարուած աշխատանքներուն:

Մրազրի իրագործման համար ներդրուած է շուրջ 270 միլիոն սոլար: Շինարարական աշխատանք-

ներուն մէջ ներգրաւուած եղած է 1200 աշխատակից, իսկ ելեկտրակայանի գործարկումէն յետոյ ստեղծուած է մշտական 50 նոր աշխատատեղի:

Նշուած է, որ կարգաբերման աշխատանքներու աւարտէն յետոյ ելեկտրակայանը ՀՀ ելեկտրակառուցութեան ցանցին պիտի մատակարարէ նմանատիպ կայաններու կողմէ արտադրուող ամէնէ աժան ելեկտրականութիւն:

Ելեկտրակայանի հիմնարկէքի արարողութիւնը վարչապետ Փաշինեանի մասնակցութեամբ տեղի ունեցած էր 2019 թուականի Յուլիս 12-ին:

Տնտեսական Շարժումութեան Ցունուար-10 Ամսուայ Մէջ Աճած Է 4.3 Տոկոսով

Հայաստանի տնտեսական շարժումութեան ցուցանիշը 2021-ի Ցունուար-Հոկտեմբերին 2020-ի նոյն ժամանակահատուածի համեմատ աճած է 4.3 տոկոսով, յայտնած են ՀՀ վիճակագրական կոմիտէին:

Արդիւնաբերական արտադրանքի ծաւալը Ցունուար-Հոկտեմբերին 2020-ի նոյն ժամանակահատուածի համեմատ աճած է 1.1 տոկոսով, շինարարութեան ծաւալը՝ 5.9 տոկոսով:

Առեւտրի շրջանառութեան Ցունուար-Հոկտեմբերին աճը կազմած է 7 տոկոս, իսկ մատուցուած ծառայութիւններու ծաւալը (առանց առեւտրի) աճած է 6.4 տոկոսով:

2021 թուականի Ցունուար-Հոկտեմբերին սպառողական գների ցուցանիշը աճած է 6.9 տոկոսով, արդիւնաբերական արտադրանքի գների ցուցանիշը՝ 9.9 տոկոսով, ելեկտրականութեան արտադրութեան ծաւալը նուազած է 3.1 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառութեան ծաւալներով այս տարուայ Ցունուար-Հոկտեմբերին նախորդ տարուայ նոյն ժամանակի համեմատ նկատուած է 13.6 տոկոս աճ: Ընդ որում, արտածումը աճած է 16.9 տոկոսով, ներմուծումը՝ 11.8 տոկոս:

Դրամի փոխարժէքը ԱՄՆ տոլարի նկատմամբ 2021-ի Ցունուար-Հոկտեմբերին եղած է 508.24:

Սեղա Սաֆարեան. Զփոխուած Դատական Համակարգով Մարտի 1-ի Գործը Զեր Կրնար Առարկայական Ելք Ունենալ

Օրերս վերաքննիչ քրէական դատարանը մերժեց ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի եւ միւսներու նկատմամբ ՀՀ քրէական օրէնսգրքի 300.1 յօդուածի (սահմանադրական կարգը տապալելը) յատկանշներով յարուցուած քրէական գործի վարոյթը կարճելու եւ քրէական հետապնդումը դադարեցնելու որոշման դէմ դատախազութեան եւ տուժող կողմի ներկայացուցած բողոքները:

Տուժող կողմի ներկայացուցիչներէն Սեղա Սաֆարեան Civic.am-ի հետ զրոյցի ընթացքին նշեց, որ իրեն համար անակնկալ չէր վերաքննիչ դատարանի որոշումը. «Այս ամբողջ 2 տարիների ընթացքում այն, ինչ որ կատարուել է Ռոպերթ Քոչարեանի վերաբերեալ քրէական գործով՝ դա կը լինի դատարանի նիստերի դահլիճում տեղի ունեցող երեւոյթները, թէ դահլիճից դուրս, թէ մեր հարազատների շրջապատում տեղի ունեցող իրավիճակներն ու դրանց կապակցութեամբ տարուող քննութիւնները, հասկանում ես, որ իրաւապահ համակարգը նոյնն է մնացել, մեծ բան չի փոխուել: 2008թ. ովքեր մասնակից էին Մարտի 1-ի դէպքերին, կարեւոր չէ՝ ինչ ձեւաչափով, այսօր իրենք նորից կան, եւ չփոխուած իրավիճակում այս գործը չէր կարող առարկայական ելք ունենալ»:

Սեղա Սաֆարեան ընդգծեց,



Փաստաբան Սեղա Սաֆարեան

որ թէպէտ վերաքննիչ դատարանը չէ բեկանած առաջին ատեանի դատարանի կայացուցած դատական աքթը, այնուամենայնիւ Ռոպերթ Քոչարեանին եւ միւսներուն վերագրուած արարքները նոյնութեամբ մնացած են. «Իրենց վերագրուած արարքները նոյն ձեւակերպումներով մնացել են, այնպէս չի, որ իրենց վերագրուած արարքները հերքուել են, որ ես դրանից ողբերգութիւն ասելու եմ: Ես ողբերգութիւն եմ ասելու հայաստանի իրաւապահ համակարգի պահուածքից եւ շատ վատ եմ գզում, որ Հայաստանում կարող է բազմադրուազ յանցագործութեան պարագայում կայացուել քրէական հետապնդում չիրականացնելու մասին որոշում»:

Հայաստանի Մէջ Covid-19-Էն Մահացած Է 23 Պատուաստուած Քաղաքացի. Բոլորը Ունեցած Են Քրոնիկ Հիւանդութիւններ

Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրէն մահացած է պատուաստուած 23 քաղաքացի, որոնք բոլորն ալ ունեցած են քրոնիկ հիւանդութիւններ: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ այս մասին ըսաւ ՀՀ առողջապահութեան նախարար՝ Անահիտ Աւանեսեան իր ասուլիսի ընթացքին:

«Այս պահին իրականացուած շուրջ 1 միլիոն 200 հազար պատուաստման փորձը ցոյց է տալիս, որ դրանք անվտանգ են, արդիւնաւէտ են: Այս 1 միլիոն 200 հազար պատուաստումների ընթացքում 79 քաղաքացիների մօտ եղել են առողջական խնդիրների որոշակի բողոք-

ներ: 40-ից աւելիի դէպքում քաղաքացիների մօտ եղել է հենց «Քորոնա» ժահր, այսինքն առողջութեան հետ կապուած բողոքները պայմանաւորուած են եղել «Քորոնա» ժահրով, պարզապէս քաղաքացին չի իմացել, որ հիւանդ է եւ պատուաստուել է, չի ունեցել որեւէ ախտանիշ», - ըսաւ Աւանեսեանը՝ աւելցնելով, որ այդ պարագային պատուաստուելու որեւէ հակացուցում չկայ, ինչիւր չի կրնար առաջանալ:

Մնացած փոքրաթիւ պարագաներուն գրանցուած են որոշակի դիւրագրացութեան (Allergy) հակազդեցութիւն եւ շարք մը այլ ախտանշաններ:

ԼՈՒՐԵՐ

Թուրքիան Սպառնալիք է Ռուսաստանի Զամար. Կը Գրէ Զինական Թերթը

Չինական South China Morning Post պարբերականը իր վերլուծական հրատարակումներէն մէկուն մէջ գրած է, որ Ռուսաստանի եւ ՀԱՊԿ-ի անոր դաշնակիցներուն համար իրական սպառնալիք դարձած է Թուրքիան: Անգարայի կասկածելի աշխուժութիւնը Թրքական խորհրդին մէջ կը սպառնայ Մոսկուայի անվտանգութեան:

Ըստ յօդուածին, Թուրքիոյ նախագահ Էրտողանի քաղաքականութիւնը կրնայ ծայրայեղ բացասական ազդեցութիւն ունենայ Ռուսաստանի եւ Չինաստանի՝ Կեդրոնական Ասիոյ մէջ ունեցած ազդեցութեան վրայ: Տեղի կ'ունենան փոփոխութիւններ, որոնք պէտք է, որ արժանանան չինական եւ ռուսական իշխանութիւններու ուշադրութեան: Խօսքը Պոլսոյ մէջ Թրքական պետութիւններու համագործակցութեան խորհուրդի գագաթնաժողովի մասին է, որ վերանուանուած է Թրքական պետութիւններու կազմակերպութիւն: Թուրքիոյ աշխուժութիւնը այդ բոլորին մէջ առանձնապատուկ հետաքրքրութիւն կրնայ առաջացնել:

Այս կազմակերպութեան անդամ են, բացի Թուրքիայէն, նաեւ՝ Ուզպեքիստանը, Ղրղզիստանը, Ղազախիստանը, Ատրպէյճանը, իսկ շունգարիան եւ Թուրքմենիստանը ստացած են դիտորդի կարգավի-

ճակ: Փեքինն ու Մոսկուան հարկ է, որ հետեւին Թուրքիոյ նախագահի այդ աշխուժութեան, որ կը ձգտի թրքալեզու պետութիւններու համագործակցութիւնը վերածել քաղաքական միաւորի: Ռ՞ր պարագային հնարաւոր է Մոսկուայի եւ Փեքինի դիրքերու թուլացումը Կեդրոնական Ասիոյ շրջանին մէջ: Թուրքիան կրնայ փորձել վերցնել իր վրայ առաջատարի դերը Թրքական պետութիւններու կազմակերպութեան մէջ, եւ փճացնել Մոսկուայի տնտեսական ազդեցութիւնը: Խօսքը եւս ՀԱՊԿ անվտանգութեան հնարաւոր խափանման մասին է: Եթէ Թուրքիան ամրացնէ տնտեսական համագործակցութիւնը ԹՊԿ անդամ հինգ պետութիւններուն հետ, ապա Մոսկուան կը հանէ Ասիոյ եւ Եւրոպայի միջեւ տնտեսական միջանցքներու ցանկէն: Հետագային արդէն կրնայ վատանալ Կեդրոնական Ասիոյ մէջ ռուսալեզու բնակչութեան վիճակը: Միաժամանակ նաեւ կը սրուի Թուրքիոյ միջեւ տնտեսական եւ ռազմական մրցակցութիւնը այդ շրջանին մէջ: Էրտողան միաժամանակ նաեւ կը մեղադրէ Չինաստանը Սինծեանի ու յղուր իսլամներու իրաւունքներու խախտումներուն մէջ: Էրտողան կը կարծէ, որ անոնք պէտք է ազատ ապրին, որպէս իրաւահասարակ քաղաքացիներ:

Էրտողան Մանրամասնութիւններ Զաղորդած է Սոչիի Եռակողմ Զանդիպման Մասին

Սոչիի եռակողմ հանդիպումը՝ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի ղեկավարներուն միջեւ, արդիւնաւէտ անցած է, յայտարարած է Թուրքիոյ նախագահը, մանրամասնելով, թէ այդ մասին տեղեկութիւններ հաղորդած է իրեն Ատրպէյճանի նախագահը՝ Աշխապատի մէջ Նոյեմբեր 28-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ:

«Արագի (Արաքս) երկայնքով երկաթուղային եւ ինքնաշարժներու ճանապարհներ կառուցելու հարցը լուծուած է: Օրակարգին վրայ է մայրուղիի կառուցումը, որ կ'անցնի Հայաստանի տարածքով եւ Նախիջեւանով՝ հասնելով մինչեւ Թրքական Իկտիք», - ըսած է Էրտողանը, ընդգծելով, թէ այդ նախագիծերով կողմերը կարեւոր քայլ մը կ'ընեն տարածաշրջանի

ուղեւորներու փոխադրումներու եւ բեռնափոխադրումներու զարգացման համար:

Էրտողան խօսած է նաեւ Թուրքիոյ կողմէ առաջ քաշուած «3+3» հարթակի մասին:

«Այս ձեւաչափի աշխուժացումը՝ Ռուսաստանի, Թուրքիոյ, Ատրպէյճանի, Հայաստանի, Իրանի, եւ եթէ համաձայնին՝ նաեւ Վրաստանի մասնակցութեամբ, կ'ապացուցէ, որ տարածաշրջանային խաղաղութիւն կայ: Մենք կը տեսնենք, որ այդ ուղղութեամբ կան դրական քայլեր», - ըսած է ան:

Վրաստանը պաշտօնապէս յայտարարած է, թէ դէմ է այս ձեւաչափին՝ Ռուսաստանի մասնակցութեան պատճառով: Պաշտօնական Երեւանը դեռ վերջնական դիրքորոշում չէ յայտնած:

Հայաստանի, Յունաստանի Եւ Կիպրոսի Յատուկ Ջոկատայինները Աւարտած Են Զամատեղ Զօրավարժութիւնները

Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի յատուկ ջոկատայիններ աւարտած են Close Quarter Battle 2021 համատեղ զօրավարժութիւնները: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ այդ մասին գրած է Greek City Times կայքը:

Համատեղ զօրավարժութիւններու նպատակը յատուկ նշանակութեան միաւորուած ուժերու մարտունակութեան եւ փոխգործակցութեան բարձրացումն էր մարտական պայմաններու մէջ: Դասընթացը ներառած է արագ արձագանգման մարտական հրահանգ-

թիւն, շարժող թիրախներու ոչնչացում, գիշերային ու քաղաքային մարտեր, բնակելի թաղամասերու մէջ մեռեալներու եւ վիրաւորներու հետ աշխատանքներ:

«Նման զօրավարժութիւնները Յունաստանի, Կիպրոսի եւ Հայաստանի միջեւ Եռակողմ համագործակցութեան ծրագրի հետ միասին, կ'արտացոլեն երեք երկիրներու զինուած ուժերու հիանալի համագործակցութիւնը», - յայտարարած է Կիպրոսի պաշտպանութեան նախարարութիւնը:

Շարլ Միշէլ Երեւանին Եւ Պաքուին Կոչ Կ'ընէ Առկայ Խնդիրները Լուծել Երկխօսութեան Միջոցով

Եւրոպական Միութեան խորհուրդի ղեկավար՝ Շարլ Միշէլ կրկին կոչ ըրած է Երեւանին եւ Պաքուին երկկողմանի յարաբերութիւններուն մէջ առկայ խնդիրները լուծելու երկխօսութեան միջոցով: Այս մասին Միշէլը յայտարարած է «Արեւելեան գործընկերութեան» քաղաքացիական հասարակութեան համաժողովի» մասնակիցներու համար տեսագրուած ուղերձով:

«Զգազուած հակամարտութիւնները լուրջ մարտահրաւէր կը հանդիսանան «Արեւելեան գործընկերութեան» տարածաշրջանին համար: Պէտք է նոր ջանքեր գործադրել, որպէսզի հակամարտութիւնները լուծուին միջազգային իրաւունքի օրէնքներուն եւ սկզբունքներուն հիման վրայ: Եւրոպական Միութիւնը պատրաստ է դերակատարութիւն ստանձնելու հակամարտութիւններու կարգաւորման, զանոնք կանխելու ուղղութեամբ», յայտնած է Շարլ Միշէլ աւելցնելով, - «Հայաստանի եւ Ատրպէյճանի յարաբերութիւնները կը վկայեն, թէ որքան փխրուն է



Եւրոպական Միութեան խորհուրդի ղեկավար՝ Շարլ Միշէլ

իրավիճակը: Որեւէ կասկած չունիմ, միայն քաղաքական երկխօսութիւնն է, որ կրնայ յանգեցնել յարատեւ լուծման: Երկու երկիրներու քաղաքացիական հասարակութիւնները եւս կրնան նպաստել անոր, կամուրջելով հանրութիւնները եւ աջակցելով հաշտեցման ուղղուած ջանքերուն»:

Անդրանիկ Քոչարեան Խուսափեցաւ Իշխանասարէն Ատրպէյճանցիներու Ետ Քաշուելու Լուրերու Մասին Զարցումէն

Աժ պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեանին լրագրողները հարցուցին թէ ձիւշղ են այն տեղեկութիւնները, թէ ատրպէյճանցիները Իշխանասարի հատուածէն նահանջուած են: «Պաշտպանութեան փոխնախարարն այստեղ էր, ինչո՞ւ այդ հարցը չօղղեցիք նրան», - հարցուց Քոչարեան:

Երբ լրագրողները ըսին, որ փոխնախարարը խուսափեցաւ պա-

տասխանելէ այդ հարցին, Անդրանիկ Քոչարեան արձագանգեց. «Թոյլ կու տա՞ք միառժամանակ էլ ես խուսափեմ, որովհետեւ կան բաներ, որ արժէ մէկ-մէկ խուսափել»: Պաշտպանութեան փոխնախարար Արման Սարգսեան այս հարցին ի պատասխան խորհրդարանէն ներս լրագրողներուն ըսած էր. «Զեր նախորդ անգամ ուայ գրածի համաձայն ճողոպրեմ, միւս անգամ կը հանդիպենք»:

Ապաշրջափակման Պարագային Ծանապարհները Պիտի Ըլլան Հայաստանի Ինքնիշխանութեան Ներքոյ. Սիեր Գրիգորեան

«Տարածաշրջանում որեւէ ապաշրջափակման պարագայում երկաթգծի ու ցամաքային ճանապարհները մնալու են Հայաստանի իրաւագորութեան ներքոյ»: Ատրպէյճանական եւ թրքական կողմերու «Զանգեզուրի միջանցք» եզրույթի վերաբերեալ «Լուրերի» հարցման ի պատասխան՝ յայտնած է ՀՀ փոխվարչապետ՝ Մհեր Գրիգորեան:

Փոխվարչապետը նաեւ մանրամասնութիւններ յայտնած է երկաթուղային եւ ցամաքային երթուղիներու յստակացման վերաբերեալ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ստեղծուած եռակողմ աշխատանքային խումբի քննարկումներէն:

«Վերահաստատում եմ, որ հաղորդակցութիւնների ապաշրջափակման գործընթացը չի ենթադրում արտատարածքային որեւէ միջանցքի տրամադրում: Վերահաստատում եմ նաեւ, որ ապաշրջափակման պարագայում թէ՛ երկաթգիծը եւ թէ՛ ցամաքային ճանապարհները լինելու են լիարժէք Հայաստանի իրաւագորութեան եւ ինքնիշխանութեան ներքոյ գոր-



ՀՀ փոխվարչապետ՝ Սիեր Գրիգորեան

ծող ճանապարհներ: Երկաթգծի հետ կապուած՝ այս պահին քննարկում են բացառապէս խորհրդային Միութեան ժամանակուայ երկաթգծի ուղիների վերականգնման եւ դրանց շահագործման հերթականութեան, ժամանակացույցի հարցերը: Ցամաքային յստակ ուղիների եւ անվտանգութեան կազմակերպման հետ կապուած հարցերը դեռ քննարկուած են», - պատասխանած է Գրիգորեան:

Տեղի է Ունեցել Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի Նիստ



«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդի նիստը Երևանի մեջ

Նոյեմբերի 27-ին, տեղի է ունեցել «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 30-րդ նիստը, որը վարել է Հանրապետության նախագահ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Սարգսեանը: Նիստին մասնակցում էին հոգաբարձուների խորհրդի 23 անդամները, որից 4-ը՝ հեռավար:

Նիստի բացմանը մասնակցեցին մեկ ընդհանուր լուսավորչական հարցազրույցի Արցախի եւ Հայաստանի սահմանների պաշտպանության ժամանակ գոհուած զինծառայողների լիշատակը:

Նիստի առաջին հարցը վերաբերում էր Հայաստանի Հանրապետությանը նուիրաբերուած դրամական միջոցների ուսումնասիրութեանը, որի վերաբերեալ հնչեցին մի քանի զեկոյցներ: Խորհուրդը մանրամասն քննարկեց զեկոյցները եւ որոշում կայացրեց հանդէս գալ յայտարարութեամբ, որը կը հրատարակուի մօտ ապագայում:

«Իրավիճակը եւ իրադարձութիւններն իրենց ազդեցութիւնն են թողել նաեւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունէութեան եւ աշխատանքների վրայ՝ ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Արցախում», - ասել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսեանը եւ յաւելել, «ներկայումս աւելի է հասունացել Հիմնադրամի արդիականացման պահը: Պէտք է որդեգրել նոր մտածողութիւն, լայնօրէն կիրառել նոր տեխնոլոգիաներ, գտնել կազմակերպական նոր մոտեցումներ»:

Հիմնադրամի գործադիր տնօ-

րէն Հայկակ Արշամեանը ներկայացրեց 2020-21 թթ. Արցախի եւ Հայաստանի մի շարք համայնքների առողջապահական, սոցիալական, մշակութային, ինչպէս նաեւ ենթակառուցուածքային զարգացմանն ուղղուած լայնածաւալ ծրագրերը: Համաձայն օրակարգի՝ հաստատուեցին 2020թ. համախմբուած ֆինանսական եւ ծրագրային հաշուետուութիւնները, 2021 թուականի պիւտճէն, ինչպէս նաեւ քննարկուեցին Հիմնադրամի հետագայ անելիքները: Խորհուրդը որոշում կայացրեց երեք տարի ժամկէտով հաստատել Հայկակ Արշամեանին գործադիր տնօրէնի պաշտօնում:

«Հոգաբարձուների խորհրդի 30-րդ նիստն անցաւ կառուցողական մթնոլորտում: Եղան բազմաթիւ հարցադրումներ, որոնց տրուեցին յստակ եւ սպառնիչ պատասխաններ», նշեց Հիմնադրամի գործադիր տնօրէն Հայկակ Արշամեանը նիստի աւարտից յետոյ:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը եւս մէկ անգամ շնորհակալութիւն յայտնեց հարիւր հազարաւոր նուիրատուներին, որոնք իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել այս ծանր ժամանակահատուածում հայրենիքի զօրացման գործում:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի առաքելութիւնը համահայկական ցանցային համակարգի ձեւաւորումն է, որի նպատակը Հայաստանի, Արցախի, ինչպէս նաեւ աշխարհասփիւռ հայկական համայնքների համաչափ, կայուն եւ փոխկապակցուած զարգացման ապահովումն է՝ հիմնուելով ընդհանուր ինքնութեան վրայ:

Սոչիի Եռակողմ Յայտարարութեանը

Շարունակուած էջ 1-էն

քանի կէտերէ բաղկացած յայտարարութիւն:

«Յաջորդ շաբաթ Հայաստանի, Ռուսաստանի ու Ատրպէյճանի փոխվարչապետները պիտի հանդիպին Մոսկուայի մէջ եւ յայտարարեն որոշակի պայմանաւորուածութիւններու մասին, որոնց շուրջ երեք երկիրներու առաջնորդները այսօր համաձայնած են»: Այդ մասին յայտարարեց Ռուսաստանի նախագահ՝ Վլատիմիր Փութինը՝ Իլհամ Ալիեւի եւ Նիկոլ Փաշինեանի հետ մօտ երեք ժամ շարունակուած բանակցութիւններէն ետք:

Փութին նշած է, որ բանակցութիւնները անցած են կառուցողական մթնոլորտի մէջ: «Մենք շատ մանրամասն խօսեցանք տնտեսական միջոցներու, առաջին հերթին՝ երկաթուղային եւ ճանապարհների ապաշրջափակման մասին», - ըսած է Փութինը:

Ռուսաստանի նախագահը յոյս յայտնած է, որ այսօրուայ՝ Նոյեմբեր 26-ի բանակցութիւններէն յետոյ տարածաշրջանի բոլոր կապերը եւ ճանապարհները բացուին:

«Հաղորդակցութեան ուղիները, փոխադրային երթուղիները, որոնք այսօր եռակողմ ձեւաչափով քննարկուեցին, ծայրայեղ կարեւոր են, ընդ որում՝ կարեւոր տարածաշրջանի բոլոր երկիրներուն, անոնց կարգին՝ Ռուսաստանի համար, քանի որ մենք շահագրգռուած ենք, որ մեր ռազմավարական գործընկեր Հայաստանի հետ հաղորդակցութեան ուղիները ըլլան յուսալի, բազմակողմ, հեշտ գործածուող եւ ամբողջ տարին աշխատող», - ըսած է Փութինը:

Ատրպէյճանի նախագահը յայտարարած է, թէ կողմերու միջեւ անկեղծ ու շատ մանրազնին քննարկում եղած է «փոխադրային երակներու ապաշրջափակման շուրջ»:

«Մենք բաց քննարկեցինք մեր ծրագրերը, բաց քննարկեցինք երկու կողմին անհանգստութիւն պատճառող հարցերը: Կարեւորը այն է, որ որոշումները, զորս մենք ընդունեցինք՝ տարածայնութիւններու ու վէճերու կարգաւորման հարցով, կը նպաստեն, որ իրավիճակը Հարաւային Կովկասի մէջ դառնայ աւելի անվտանգ ու կանխատեսելի», - ըսած է Իլհամ Ալիեւը:

Հայաստանի վարչապետը գոհունակութիւն յայտնած է հանդիպման արդիւնքներէն: «Մենք քննարկեցինք օրակարգի բոլոր հարցերը: Սա հանդիպում էր ոչ թէ հարցերը թաքցնելու, այլ՝ դրանք բաց քննարկելու համար: Շատ դրական է, որ մի շարք հարցերի շուրջ յստակեցրեցինք դիրքորոշումները, եւ պարզուեց, որ որոշ հարցերի շուրջ չկայ որեւէ թիւրընթացութիւն, ինչպէս թւում էր մինչ այս հանդիպումը», - նշած է Փաշինեանը:

Բացի այդ, կողմերը, ըստ Ռուսաստանի նախագահին, համաձայնած են նաեւ մինչեւ այս տարուայ վերջ մեքենակալութիւններ ստեղծել՝ հայ-ատրպէյճանական սահմանի սահմանազատման եւ սահմանազծման համար: «Յոյս ունիմ, որ այդ տեղի կ'ունենայ որքան հարաւոր է արագ», - ըսած է Փութինը:

Ռուսաստանի նախագահի խօսքով, կողմերը յաջողած են նաեւ

առաջընթաց արձանագրել մարդասիրական հարցերու կարգաւորման ուղղութեամբ: Մանրամասնութիւններ առայժմ չեն հրատարակուած:

Իլհամ Ալիեւը, անդրադառնալով այս հարցին, պնդած է, թէ Պաքուն աւելի քան հարիւր գերի վերադարձուցած է հայկական կողմին: «Այսօր ալ վերադարձուած է մէկ հայ վիրաւոր զինծառայող, որուն Ատրպէյճանցի բժիշկները օգնութիւն ցուցաբերած էին, ինչպէս նաեւ մէկ քաղաքացիական անձ, որ մոլորուած էր», - ըսած է Ատրպէյճանի նախագահը, աւելցնելով. - «Ատրպէյճանը միշտ հանդէս եկած է մարդասիրութեան գերակայութեան սկզբունքէն, եւ մենք մտադիր ենք շարունակել աշխատանքը այդ ուղղութեամբ»:

Ալիեւին, Ալիեւ պնդած է, թէ Պաքուն այժմ հայկական կողմէն համագործակցութեան ուղղուած դրական միտումներ կ'արձանագրէ:

«Հայկական կողմէն մենք կը տեսնենք մտադրութիւն՝ ստեղծելու նախադրեալներ, որպէսզի իրավիճակը տարածաշրջանին մէջ ըլլայ աւելի կանխատեսելի: Ես բազմիցս ըսած եմ, որ մենք Ատրպէյճանի մէջ նպատակադրուած ենք փակել Հայաստանի հետ բազմաձայն հակամարտութեան էջը, սկսիլ բնական փոխգործակցութեան փուլ, եւ կը կարծեմ, որ այս ձեւաչափով մենք կը հասնինք մեր նպատակներուն», - ըսած է Ատրպէյճանի առաջնորդը:

Հայաստանի վարչապետը, իր հերթին, պնդած է, թէ կողմերը ընդհանուր պատկերացում ունին տարածաշրջանի փոխադրային կապերու եւ հաղորդակցութեան ուղիների մասին ապաշրջափակման շուրջ: Անդրադառնալով սահմանի սահմանազատման եւ սահմանազծման հարցին՝ Փաշինեան ընդգծած է, որ կողմերը պայմանաւորուած են համապատասխան պայմաններ, հայատրպէյճանական սահմանին անվտանգութեան ու կայունութեան մեքենակալութիւններ ստեղծել: Մանրամասնութիւններ, սակայն, չէ յայտնած:

«Ես, ընդհանուր առմամբ, այսօրուայ հանդիպումն ու քննարկումը շատ դրական եմ գնահատում: Ուզում եմ եւս մէկ անգամ շնորհակալութիւն յայտնել մեր ռազմավարական դաշնակցին՝ Ռուսաստանի Դաշնութեանը՝ այս նախաձեռնութեան համար: Ես վերահաստատում եմ, որ Հայաստանը եւ Հայաստանի կառավարութիւնը, որը ստացել է ժողովրդի մանտաթը, պատրաստ է խաղաղութեան դարաշրջան բացել մեր երկրի եւ մեր տարածաշրջանի համար: Մենք նպատակադրուած ենք դրան», - յայտարարած է Հայաստանի վարչապետը:

Եռակողմ հանդիպման աւարտին Ռուսաստանի նախագահը որպէս յուշանուէր՝ Ձիթենիի ճիւղեր նուիրած է Հայաստանի ու Ատրպէյճանի առաջնորդներուն՝ իբրեւ խաղաղութեան ու բարգաւաճման խորհրդանիշ: «Յոյս ունիմ, որ այսօր ձեռք բերուած համաձայնութիւնները կ'իրագործուին, եւ պայմաններ կը ստեղծեն յարաբերութիւններու կարգաւորման ուղղութեամբ հետագայ քայլերու համար», - ըսած է Փութինը:

Երեք առաջնորդները այսօրուայ բանակցութիւններու ի արդիւնք նաեւ յայտարարութիւն ընդունած են:

Աղմուկ՝ Վասն Ոչինչի

Շարունակուած էջ 1-էն

Աշխարհի բոլոր ծագերէն Հայութիւնը փութաց իր մասնակցութիւնը բերելու պատերազմի քանջերուն, առանց հարցնելու թէ այդ գումարը ի՞նչ ձեւով պիտի տնօրհնուին: Հայաստանի գիտուած ուժերը կը ֆինանսավորուին երկրի պետական պիւտճէն, իսկ բանակը կը կռուի ու կը զոհուէր՝ պաշտպանելու համար Արցախեան հողը: Հետեւաբար, իւրաքանչիւր հայու կատարած նուիրատուութիւնը ծառայած եղաւ իր նպատակին,

երբ այդ գումարները փոխանցուեցան պետութեան գանձին:

Հոս կ'արժէ յիշել նաեւ երկրորդ պարագայ մը: Միայն այս տարի Հայաստանի կառավարութիւնը Արցախի պիւտճէնի յատկացուած է 200 միլիոն տոլար: Այսինքն, Հիմնադրամէն պետութեան փոխանցուած գումարին կրկնապատկել:

Ժամանակն է որ, Հիմնադրամով «մտաւոգ» ձեւացողները դադրեցնեն իրենց անիմաստ արշաւը եւ վասն ոչինչի աղմուկը:

«ՄԱՍԻՍ»

Անգարայի Սեջ Բազմամարդ Ցոյցեր Տեղի Ունեցած Են Իշխանութիւններու Զրաժարականի Պահանջով



Հագարաւոր մարդիկ Անգարայի մէջ փողոց իջած են՝ թրքական արժոյթի կտրուկ անկման եւ զիններու շարունակական բարձրացման դէմ: Յուցարարները անցած են մայրաքաղաքի կեդրոնական հատուածներով՝ պահանջելով էրտողանի «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան հրաժարականը:

Լիրան անցեալ մէկ օրուայ ընթացքին արժեզրկուած է աւելի քան տասը տոկոսով եւ հասած մրցանշային ցած ցուցանիշի՝ Ռէճեպ Էրտողանի վերջին յայտարարութիւններէն յետոյ: Երկրի ղեկավարը կրկին աջակցութիւն յայտնած էր կեդրոնական դրամատան քաղաքականութեան ու պնդած, թէ կը յաղթէ պատերազմին, որ կը մղուի յանուն «տնտեսական անկախութեան»:

«Մենք կը տեսնենք, որ որոշ ուժեր կը խաղան արժոյթի, վերաֆինանսավարման տոկոսադրոյքի ու գնաճին հետ», - կառավարութեան նիստէն յետոյ յայտարարած էր էրտողան:

Թէ որու մասին է խօսքը, էրտողանը չէր յստակացուցած, բայց պնդած էր, որ կառավարութիւնը պատրաստ է կամքի ուժը ցոյց տալ եւ «սեփական խաղը խաղալ»:

Ընդդիմախօսներն ու անկախ փորձագէտները, սակայն, էրտողանի լաւատեսութիւնը չեն կիսեր:

Կեդրոնական դրամատան նախկին ղեկավար՝ Մեմիթ Թումանը, զոր նախագահ էրտողանը

աշխատանքէն ազատած էր անցեալ ամիս, կոչ ըրած է անյապաղ քայլեր ձեռնարկել՝ թրքական արժոյթը ամրապնդելու համար:

Ընդդիմախօսները, մասնաւորապէս, պնդած են, որ էրտողանը ճշունք կը գործադրէ կեդրոնական դրամատան վրայ՝ վերաֆինանսավարման տոկոսադրոյքները իջեցնելու համար քիչ քանի հաշուարկներով, այդ պէտք է կայունացնէ սրբնաց գնաճը, նպաստէ ներդրումներուն ու խթանէ նոր աշխատատեղերու ստեղծումը: Սակայն, վիճակագրութիւնը հակառակ պատկեր առայժմ կ'արձանագրէ:

Գիներու կտրուկ աճի եւ լիրայի մրցանշային անկման ֆոնին՝ անցեալ շաբաթ, Թուրքիոյ ընդդիմութիւնը հարց բարձրացուցած էր արտահերթ նախագահական ու խորհրդարանական ընտրութիւններ կատարելու մասին:

«Ներկայիս իշխանութիւնը ի գործ չէ յաղթահարելու տնտեսական խնդիրները», - յայտարարած էր Ժողովրդական-հանրապետական կուսակցութեան առաջնորդ՝ Քեմալ Բըլըչտարօղլուն:

էրտողան, սակայն, կտրականապէս բացառած է արտահերթի երթալու հնարաւորութիւնը: «Անոնք կը կատարուին ըստ հաստատուած ժամանակացոյցին՝ 2023-ին, եւ մենք կրկին կը յաղթենք», - ըսած է Թուրքիոյ 67-ամեայ ղեկավարը:

Յայտարարութիւն «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի

Շարունակուած էջ 1-էն

կողմից ծախսուած գումարների սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրումը:

ՀՀ վարչապետը դիմեց ՀՀ հաշուէքննիչ պալատին՝ առաջարկելով դիտարկել այս հարցով կատարուելիք հաշուէքննութիւններում աշխատանքային խմբին եւ աուդիտորական կազմակերպութեանը փորձագիտական մակարդակով ներգրաւելու հնարաւորութիւնը:

ՀՀ վարչապետը յայտարարեց կառավարութեան թափանցիկ եւ հաշուետուողական գործելու պատրաստակամութեան մասին, աշխատանքային խմբի եւ արտաքին աուդիտորական կազմակերպութեան համար հասանելի դարձնել

սկզբնական բոլոր փաստաթղթերը՝ աշխատանքներն ամբողջականացնելու համար եւ, որը շատ էական է, վստահեցնել թէ՛ խորհրդին, թէ՛ հանրութեանը, որ Հիմնադրամի ներդրումները կառավարութեան խողովակներով պատշաճ կերպով են օգտագործուել:

Հոգաբարձուների խորհուրդն ու շարունակական կենտրոնում կը պահի այս հարցը եւ, ըստ անհրաժեշտութեան, վերստին կ'անդրադառնայ դրան:

Խորհուրդը, արժեւորելով Հիմնադրամի դերը աշխարհասփիւռ հայութեանը համընդհանուր նպատակի շուրջ համախմբելու գործում, կրկին շնորհակալութիւն յայտնեց բոլոր նուիրատուներին եւ աջակիցներին:

Զինական «Քորոնա» Համավարակէն Ետը՝ Հարաւային Ափրիկէն Նոր Ախտանիշ Մը «Օմիգրոն» Անունով



Մինչ միջազգային հանրութիւնը կը սպասէր քորոնա համավարակի աստիճանական անյայտացումին, միւս կողմէ յանկարծ, շաբաթէ մը ի վեր նոր չարաբաստիկ լուր մը եկաւ: Այս անգամ վտանգը հարաւային Ափրիկէէն էր, քորոնայի գուգահեռ «Օմիգրոն» անունով նոր ախտանիշ մը: Այս վարակի մասին հակասական լուրեր կը շրջին: Ոմանք կ'ըսեն թէ ան շատ մեղմ է եւ ոչ շատ ազդեցիկ: Յամենայն դէպս «Ռէօթըր» գործակալութեան ժընեւէն առաջած լուրին համաձայն՝ Օմիգրոն համավարակը կրնայ լայն տարածում ստանալ, միջազգային մակարդակի վրայ: Այսու հանդերձ Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութիւնը նշեց որ կարգ մը վայրերու մէջ, այս վարակը կրնայ շատ սաստիկ հետեւանքներ ունենալ:

Յարդ ոչ մէկ մահուան դէպք չէ արձանագրուած այս վարակին կապակցութեամբ: Սակայն յաւելեալ հետազոտութիւններ յառաջ կը տարուին, գնահատելու համար վարակին տարողութիւնն ու անվտանգութիւնը, ինչպէս նաեւ պատուաստի հանդէպ դիմադրողականութեան տարողութիւնը:

Առաջին անգամ Օմիգրոնի մասին զեկուցուած է Նոյեմբերի 24ին, Հարաւային Ափրիկէի մէջ, ուր վարակն սկսած է արագօրէն տարածուիլ: Այդ դէպքէն ետք, տասնեակ մը երկիրներ, ուղեւորներու վրայ ճամբորդական արգելքներ դրին: Ճաբոնն ու Իսրայէլը ինքնամեկուսացումի երթարկուելով իրենց սահմանները փակեցին օտարահպատակներու առջեւ:

Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութիւնը դարձեալ կրկնեց որ վտանգի մէջ

եղող ճամբորդութիւնները պէտք է որ հակակշռի տակ առնուին: Պէտք է գիտակցիլ այն իրողութեան որ քորոնա ժահրի տարածումը կրնայ աւելի լայնատարած հիւանդութիւններու եւ մահացութեան պատճառ դառնալ: Ազդեցութիւնը խոցելի է եւ շատ էական է այն վայրերուն մէջ ուր պատուաստումը շատ ցած մակարդակի վրայ է:

Covid 19-ի պարագային պատուաստուած անձի մը վարակի յայտնաբերումը կանխատեսելի է, թէեւ շատ փոքր համեմատութեամբ:

Ընդհանուր առմամբ, ըստ ԱՀԿ-ի արհեստագիտական զեկուցին օմիգրոն տարբերակը ներուժն ունի արտահանելու դիմադրողականութիւնը: Այս կապակցութեամբ առաւել տրեւալներ ունենալու յոյսեր կան յառաջիկայ շաբաթներու ընթացքին:

Օմիգրոնի մասին արտադրատուելով ԱՄՆ-ի նախագահ ձօ Պայտոնը ըսաւ թէ այս երեւոյթը նկատի առնուելիք պարագայ մըն է եւ ոչ թէ խուճապ եւ քաոսի առարկայ: Մենք ունինք բաւարար պատուաստանիւթ: Բոլորս ալ պէտք է պատուաստուինք եւ երկրէն ներս 80,000 կեդրոններ կան պատուաստուելու եւ ձրի է: Դիմակներ գործածելով եւ կանխազուշական միջոցներու դիմելով դուք ձեզ պաշտպանած կ'ըլլաք: Նոյն իսկ իսթանոլ (պուսթր) պատուաստն ալ հարկ է որ ստանաք: Մենք այս տարի բաւարար չափով պատուաստանիւթ ունինք նաեւ 5 տարեկանէն վեր եղողներու ալ: Տօնական օրերը կրնանք դիմաւորել լրիւ պատուաստուած վիճակով: Մենք պատրաստ ենք նաեւ պատուաստանիւթով օգնելու աշխարհի կարիաքաւոր երկիրներուն:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամ

Շարունակուած էջ 1-էն

քի մարդասիրական շարունակուող կարիքներուն, ու զանոնք հոգալու կոչուած նոր ծրագիրներու մասին:

Մինչեւ Թեյեթոնի աւարտը, \$12,351,000 հաւաքուած էր հայրենիքի օժանդակութեան համար: Այս գումարը կը ներկայացնէ 2021ի ընթացքին միջազգայնօրէն հաւաքուած ընդհանուր գումարը՝ Միացեալ Նահանգներուն, Ֆրանսայի, Քանադայի, եւ աշխարհի տարածքին այլ հայկական համայնքներու մէջ:

Հայաստան Հիմնադրամը կը շարունակէ նուիրատուութիւններ ընդունիլ: Ապահով նուիրատուութիւն մը կատարելու համար, սեղմեցէք հետեւեալ յղումը՝ armeniafund.org/donate: Հայաստան Հիմնադրամին կողմէ հայրենիքին յատկացուող օժանդակ-

Պայքա՛ր թրքական երաժշտութեան դէմ, պա՛յքար թրքական սերիալներու դէմ եւ պայքար՝ թրքական ապրանքներուն դէմ: Բնական է, պէտք է պայքարիլ, բայց այդ պայքարը պէտք է մնայ կարգախօսային եւ արագ մարող զգացական շրջագիծի մէջ: Ըստ երեւոյթին, ցարդ յայտարարուած պայքարները, բազում յիշեցումները, նոյնիսկ սպառնալիքները չեն կրցած մեր իրականութենէն արմատախիլ ընել այդ երեւոյթները, որովհետեւ մեկնակէտի շփոթ մը, հարցադրումի եւ թիրախի անորոշութիւն մը գոյութիւն ունի, եւ այդ շփոթն ու անորոշութիւնը պիտի յամենան այնքան ատեն, որ կը խուսափինք հարց տալէ, թէ ինչո՞ւ մեր ժողովուրդը հակամէտ է ընկալելու եւ պահելու թրքատիպ երեւոյթները: Մեր ժողովուրդը ինչո՞ւ կը յամառի իրմէ չվանելու թրքական ազդեցութիւնները եւ տկարութիւն ունի անոնց հանդէպ:

Թրքական շահերը կը պահանջեն, որ ծրագրուած ձեւով «մշակոյթ» եւ սպառողական ապրանքներ արտածուին դէպի այլ երկիրներ: Հայօրէն դիտած՝ պէտք է պայքարիլ թրքական այս ներթա-

փանցումներուն դէմ: Բայց չարիքին արմատը պէտք է փնտռել միայն թուրքիոյ թափանցումի քաղաքականութեան մէջ, որ ըստ էութեան քաղաքական խորք ունի, այլ նաեւ մեր ժողովուրդի մէկ կարեւոր համեմատութեան մօտ յամեցող թրքատիպ նկարագրին մէջ: Նկարագրի մը՝ որ ներազգային գետնի վրայ դուռ կը բանայ մշակութային-քաղաքակրթական տագնապի:

Պէտք է մոռնալ, որ մեր ժողովուրդը դարեր շարունակ ապրած է թրքական ընկերութեան մէջ եւ մեծապէս ազդուած է թրքական բարքերէն: Բազմադարեան իսլամի ստրկատիրական շրջանին, բացի իր ընտանեկան-տոհմական բարքերէն ու սովորութիւններէն, մեր ժողովուրդը մեծ չափով ազդուած է թրքական մշակոյթէն, շփում ունեցած է թրքական բարքերուն հետ, խօսած է թրքերէն, հայհոյած է թրքերէն, նոյնիսկ երգած է թրքերէն: Դժբախտաբար, ստրկատիրական կեանքը պատճառ դարձած է որ մեր ժողովուրդը շատ բան կորսնցնէ իր ազնուական, քաղաքակրթութեան նկարագրէն եւ փոխարէնը կազմաւորէ ստորակայական բարոյցով հարուստ նկարագիր մը, որ դիւրաւ ընտելացած է թրքական ընկերութեան բացասական եւ յոռի բոլոր երեւոյթներուն հետ:

Այս տողերը ոչ մէկ ձեւով կ'արդարացնեն թրքական «մշա-

«Արփիար Արփիարեան Զասարակական-Քաղաքական Զայեացքներն ու Գործունեութիւնը» (Յեղինակ՝ Գեղամ Յովհաննիսեան)

ԱԽԵՏԻՍ ՈԱՁՄԻԿ


Իր «Կարմիր ժամուց» նշանաւոր վիպակով եւ գրական պատկառելի ժառանգութեամբ արդէն իսկ, գրագէտ Արփիար Արփիարեան իր հաստատուն պատուանդանը ապահոված է հայ գրականութեան մէջ: Սակայն, ան գրագէտին անդին ու աւելին, եղած է ազգային-հասարակական ու քաղաքական գործիչ, հրապարակագիր, խմբագիր եւ կուսակցական ղեկավար:

Կարելի է ըսել, որ հայ կեանքի ամենախնդրալարոյց դէմքերէն եղաւ ան՝ իր փոթորակալի կեանքով, յախուռն նկարագիրով եւ հատու գրիչով: Իր նահատակութենէն (12 Փետրուար 1908) ետքն ալ զբաղեցուց մամուլը. տարիներու երկայնքին ու բազմաթիւ գրիչներ անդրադարձան անոր՝ տարամէտ ու հակասական մտայնութեամբով, թեր ու դէմ կարծիքներով: Եւ ուշագրաւ է, որ ցարդ կը շարունակուի նահատակեալ գրագէտին շուրջ հետաքրքրութիւնները, որոնցմէ էր, 2019-ին հայրենի պատմաբան Գեղամ Յովհաննիսեանի հրապարակած հատորը՝ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատմութեան բաժանմունքին կողմէ՝ Մեսրոպ Արք. Աշճեան մատենաշարով (թիւ 197):

Շատ գրուած է Ա. Արփիարեանի մասին՝ անոնք ըլլան մենագրութիւններ, յօդուածներ, յուշեր, վերլուծականներ: Գրեթէ իր բոլոր ժամանակակիցներն ու գործակիցները իրենց գրութիւններով անդրադարձած են անոր եւ անոնք քիչ չեն՝ նկատի առնելով Արփիարեանի գործունէութեան լայն դաշտը, ապրած երկիրներն ու կապերը, յարաբերած մարդկանց լայն շրջանակը: Նաեւ հայ գրականութեան, գրականագիտական թէ պատմութեան դասագիրքերու մէջ համարեա անպակաս է անունը անոր:

Ահաւասիկ նոր մենագրութիւն մը Ա. Արփիարեանի մասին, որուն հեղինակն է Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան բաժինէն 1990-ի շրջանաւարտ Գ. Յովհաննիսեան: Սոյն գործը եղած է անոր թեկնածուական աստի ճանին աւարտաճառը: Ան խորացած է հայոց նորագոյն պատմութեան հարցերուն մէջ եւ 2012-ին հրապարակած «Հնչակեան կուսակցութեան Պատմութիւն (1887-1915)» աշխատութիւնը:

239 էջերէ բաղկացած այս գիրքը «Առաջաբան»էն ետք ունի չորս գլուխներ եւ վերջաբան մը: Մենագրութեան խմբագիրն է պատմաբան Սուրէն Սարգսեան: Առաջաբանին մէջ հեղինակը համառօտակի անդրադառնալով իր ուսումնասիրութեան բովանդակութեան եւ թուելէ ետք Արփիարեանի նուիրուած բազմաթիւ աշխատութիւնները, կը յաւելուի՝ թէ բաւականին ծաւալուն նիւթեր ու աղբիւրներ կան անոր մասին մամուլի, արխիւներու եւ բազմաթիւ մտաւորականներու յուշագրութեանց մէջ: Ի հարկէ, իր գրականութեան մասին գրած են գրականագէտներ, իւրատիպ հրապարակագրութեան մասին՝ հայ մամուլի երախտաւորներ, սակայն՝ անոր կեանքին յոյժ էական հատուածներէն մին է իր քաղաքական-հասարակական եւ կուսակցական յախուռն եւ անա կակշռելի գործու-



նէութիւնն ու նկարագիրը՝ որուն համար ալ ան իր կեանքով վճարեց անոր գինը 12 Փետրուար 1908-ին՝ երբ եղբայրադաւ գնդակով ինկաւ Գահիրէի մէկ գոլիտին անկիւնը: Ահա Գ. Յովհաննիսեանի գնահատականը Առաջաբանին մէջ՝ «Իր գրական-հրապարակախօսական ու հասարակական գործունէութիւնից գատ, 19-րդ դ. վերջին Արփիարեանը մտաւ քաղաքական պայքարի յորձանուտ, եւ ոգեւորուելով հնչակեանների գաղափարներով, անդամագրուեց այդ կուսակցութեանը՝ մեծապէս նպաստելով արեւմտահայութեան շրջանում քաղաքական այդ ուժի հեղինակութեան եւ ազդեցութեան աճին» (էջ 7): Աւելի ետք՝ «Արփիարեանի կուսակցական գործունէութիւնն ունեցաւ թէ՛ վերելքի եւ թէ՛ վայրէջքի շրջաններ: Այս մասին խօսելիս պետք է ընդգծել այն իրողութիւնը, որ Արփիարեան-կուսակցական գործիչը երբեք չունեցաւ այն յաջողութիւնը, ինչ Արփիարեան-տեսաբանն ու հրապարակախօսը» (էջ 8):

Առաջին գլուխը՝ «Արփիար Արփիարեանի Լուսաւորական գործունէութիւնը» (էջ 18-63) ունի երկու մաս՝ մին Արեւմտեան Հայաստանի ընկերային-տնտեսական կացութիւնը ամփոփող եւ երկրորդը՝ Ա. Արփիարեանի «կրթական մշակութային գործունէութիւնը»: Այս ոլորտին մէջ, ան ընթացաւ երկու ուղղութիւններով՝ կրթական գործին զարկ տալ, յատկապէս հայկական գաւառներու մէջ եւ մամուլի միջոցաւ ազգային գիտակցութեան հրաւիրել խորթ մերի մէջ անտարբեր դարձած հասարակութեան: Ժողովրդանուէր երիտասարդ գործիչը ունէր գործուն համախոհներ կրթական գործին մէջ. անոնք էին Մինաս Չերազ եւ Մկրտիչ Փորթուգալեան, որոնց հետ հիմնելով Արարատեան Ընկերութիւնը (աւելի ուշ՝ Միացեալ) կրթական լայն ցանց մը հաստատեցին Արեւմտահայաստանի մէջ՝ նոր սերունդը ազգային ոգիով ջամբելու հեռատես քաղաքականութեամբ: Իսկ իր հիմնական ասպարէզը եղաւ մամուլը՝ ուր գրական թէ հրապարակագրական էջերով անկրկնելի աւելն հաղորդեց հայ մամուլին եւ իրապաշտ գրիչներ համախմբեց իր շուրջ, որոնք հետագային եղան կերտիչները արեւմտահայ գրականութեան: Ան սերտ գործակցութիւն ունեցաւ թիֆլիս հրատարակուող «Մշակ» ամենատարածուն օրաթերթին հետ՝ ի մտի ունենալով հայութեան երկու հատուածներուն կամըջումն ու համագործակ-

ցութիւնը: Հայկակ ստորագրութիւնը ոչ միայն փայլք տուաւ «Մշակ»-ին, այլեւ՝ արեւմտահայ դժիքն եւ անմխիթար իրականութիւնը պարզեց արեւելահայոց մօտ: Մինչ՝ Պոլսոյ մէջ անոր գրիչը դարձած էր ամենափնտուածն ու ժողովրդամէտը՝ երբ կը խմբագրէր կամ կ'աշխատակցէր «Արեւելք»-ին, «Մասիս»-ին կամ «Հայրենիք»-ին: Մեծանուն պատմագէտ Լէօն կը գրէր՝ «Հայկակի պէս անխոնջ, լաւատեղեակ, տաղանդաւոր թղթակից երբեք ոչ մի հայ թերթ չի ունեցել»: Անուանի գրող Հրանդ Ասատուր կը վկայէ՝ «Կծու քննադատ մըն էր, յանդուզն համարձակուող մը, անգութ ճայթող մը, ոչ սպառնալիքներէ կը վախնար, ոչ բամբասանքէ»: Իր անուանի կենսագիրներէն, իրաւաբան Ստեփան Շահապոյ կը գրէ, որ Արփիարեան իր շրջանի ամենամարտնչող ու յառաջդիմական հրապարակագիրն էր արեւմտահայ շրջանակին մէջ, որ այդ ասպարէզին մէջ ոչ ոք ունեցաւ անոր «անհատական անկախութիւնը», իր բառամթերքին մէջ երբեք չուզեց մտցնել «վսեմա շուք», «վսեմափայլ» կամ «ազնուաշուք» յորջորջումները: Իսկ գիրքին հեղինակը կը շեշտէ՝ «Արփիարեանը աճեցրել եւ ուղղութիւն է տուել գրական միամբողջ սերնդի՝ Գր. Զօհրապ, Տ. Կամսարական, Լ. Բաշալեան, Ե. Օտեան եւ ուրիշներ, որոնց հետ է կապուած արեւմտահայ ռեալիստական արձակի բուն զարգացումը» (էջ 63):

Երկրորդ գլուխը վերնագրուած է «Արփիար Արփիարեանի Հասարակական Հայեացքներն Ու Գործունէութիւնը» (էջ 64-98): Երեք մասեր ունեցող գլուխը կ'անդրադառնայ անոր մտայնութեան հոգեւորականութեան ու եկեղեցւոյ, ազգային մարմիններու եւ ունեւոր




Խաւին նկատ մամբ:

Ի հարկէ, ան ձաղկողն է շահամուլ ու նիւթապաշտ եկեղեցականաց «Այն օրը, որ հայ եկեղեցիները դրամէ խորշին, այն օրն է, որ եկեղեցիին համար պիտի սկսի երջանկութեան թուականը». ան կը պահանջէ որ եկեղեցիէն դուրս մղուին տգէտներն ու շահամուլները: Ան յատուկ պատկանաք ունի Մկրտիչ Խրիմեան Հայրիկի եւ Ղ. Ալիշանի նկատմամբ: Ան մօտէն հետեւած է Ազգային Վարչութեան ժողովներուն, որովհետեւ եղած է ազգային երեսփոխան Բաղէշի շրջանէն: Սուր կերպով քննադատած է մանրախնդիր, անարժան եւ հակաժողովրդական ազգային երեսփոխանները եւ յատկապէս անոնց սուլթանամէտ տարրերը:

Երրորդ գլուխը՝ «Արփիար Արփիարեանը Եւ Արեւմտահայերի Ազատագրութեան Խնդիրը» (էջ 99-156) ունի երեք մասեր: Այս անգամ մեր դիմաց կը յառնի ազատագրական պայքարի գաղափարախօսը: Գրական գործերով եւ

Շար.ը էջ 15



Գինեձօն
Գեորգ Բեռլեքեանի Գիրքին

Հայկական Ասացուածքներ
Թարգերէնէ Թարգմանուած
Եւ
Armenian Sayings
Translated from Turkish into English

Կամակերպութեամբ Թեքեան Մշակութային Միութեան
Փաստինա-Ալէստէլ Մասնաճիւղի Վարչութեան

Բացման Խօսք – Սիրան Օգնայեան

Գիրքը Պիտի Ներկայացնէ
Վաստակաւոր Դերասան-Բեմագրիչ
Գրիգոր Սաթամեան


Գիրքէն Ընթերցումներ Պիտի Կատարէ
Տօքթ. Գրիգոր Սիմոնեան

Տեղի Պիտի Ունենայ
Կիրակի, 12 Դեկտեմբեր 2021-ի
Երեկոյեան ժամը 5:00ին

ԹՄ Միութեան Ալթատիւայի Պէշկօթիւրեան Սրահին մէջ
1901 N. Allen Ave. (Corner of New York Dr.) Altadena, CA 91001

Մուտքը Ազատ Հիւրասիրութիւն

Նոր Հրատարակութիւն. Զօրավար Անդրանիկ եւ Վաղարշակ Շահինեան Դեկտեմբերի 9-ին Նիւ Ճըրզիում Կը Ներկայացնին Թաթուլ Յակոբեանը



Հայկական ուսումնասիրութիւնների ԱՆԻ կեդրոնը Միացեալ Նահանգներում անգլերէնով հրատարակութեան է պատրաստել The Journeys of Heroes: General Antranig, Vagharshag Shahinian հատորը:

Հայագիտական արժէքաւոր այս աշխատութիւնը ներառում է երկու առանձին պատմութիւն՝ Եղիշէ Քաջունու Զօրավար Անդրանիկ - Հայկական առանձին հարուածող զօրամասը օրագրութիւնը եւ Սարդարապատի հերոսներից Անդրանիկ Շահինեանի հարցազրոյցը, որ արուել է նրա կեանքի մայրամուտին՝ ԱՄՆ-ում:

2015 թուականին ԱՆԻ կեդրոնը վերահրատարակել էր զօրավարի գրագիր Եղիշէ Քաջունու օրագրութիւնը:

Զօրավարը իր մի քանի հազար զինուորականներ էլ մի քանի տասնեակ հազար արեւմտահայ գաղթականութեան հետ մէկ տարուայ ընթացքում անցաւ Գիւմրի (Ալեքսանդրապոլ)-Տաշիր (Վորոնցովկա)-Ստեփանավան (Ջալալ Օղլի)-Դսեղ-Դիլիջան-Սեւան (Ելենովկա)-Գաւառ (Նոր Բայազետ)-Մարտունի (Ղարանլուղ)-Վարդենեաց լեռներ (Սելիմ)-Եղեգնաձոր (Քեշիշքենդ)-Նախիջեւան-Ջուղա (Ջուլֆա)-Խոյ-Ջուղա-Նախիջեւան-Քաջարան-Կապան-Գորիս-Բերձոր (Աբգալլար)-Գորիս-Սիսիան-Արարատ (Դավալու)-Մասիս-էջմիածին ճանապարհը:

Դա տառապանքի, զրկանքների, հիասթափութիւնների, բայց նաեւ հաւատի ու նուիրումի ճանապարհ էր:

Ձէնքերը յանձնելով Ամենայն Հայոց կաթողիկոսին, նա հեռացաւ Հայաստանից՝ նստելով էջմիածին

կայարանի գնացքը: Այս գիրքը առաջին անգամ տպագրուել է 1921-ին Պոսթնուոմ՝ ԱՉԳ-ի տպարանում: Կեանքի վերջին շրջանում՝ 1976-ին, Քաջունին վերահրատարակել է այն «Անդրանիկի եւ Հայկական Առանձին Հարուածող Զօրամասի հետ» խորագրով:

Վաղարշակ Շահինեանը 1918-ին իր 1100-հոգանոց աշխարհագորային բանակով մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին: Նա ծնուել էր 1889-ին, Վանում: 1910-ին մեկնել էր ԱՄՆ, սակայն կարճ ժամանակ անց վերադարձել, մտել զինուորական ծառայութեան եւ մասնակցել առաջին աշխարհամարտին:

Յետագայում նա կրկին մեկնել է ԱՄՆ՝ ծաւալելով պիզնես գործունէութիւն: Մահից յետոյ՝ 1976 թուականին, նրա աճիւնից մի բուռ հող բերուել էլ ամփոփուել է Սարդարապատի յուշահամալիրի արձիւների ճեմուղու առաջին արձուի մեծագիր քանդակի մերձակայ հատուածում:

Անգլերէն այս հատորի համար առաջաբան են գրել Քաջունու եւ Շահինեանի թոռները, որոնք բնակուում են Նիւ Ճըրջիում:

2021 թուականի Դեկտեմբերի 9-ին, Նիւ Ճըրջիում, Սրբոց Ղեւոնդեանց Հայկական եկեղեցում (St. Leon Armenian Church, Abajian Hall, 12-61 Saddle River Road, Fair Lawn, NJ, for information call 917-837-1297), երեկոյեան 7:30-ին ԱՆԻ կեդրոնի համակարգող եւ Ալիք Մեղիայի սիւնակագիր Թաթուլ Յակոբեանը կը ներկայացնին The Journeys of Heroes: General Antranig, Vagharshag Shahinian հատորը:

Նափուլի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Մէջ Միջեկեղեցական Արարողութիւն



Իտալիոյ Նափուլի քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ (San Gregorio Armeno) եկեղեցւոյ մէջ Երեքշաբթի 24 Նոյեմբերի երեկոյեան տեղի ունեցաւ էքիւմենիք աղօթք մը: Խորքին մէջ, սա շատ յատկանշական արարողութիւն մըն էր, որուն միասնաբար նախագահեցին Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակի Վատիկանի Սուրբ Աթոռի մօտ Հայ Առաքելական Եկեղեցւոյ մշտական ներկայացուցիչ Տ. Խաժակ Արք. Պարսամեան եւ Նափուլի վիճակաւոր Արքեպիսկոպոս Միմմօ Պաթալիա: Ներկայ էր նաեւ Նափուլի օժանդակ եպիսկոպոսը՝ Կայէթանօ Քասթելլօ: Տ. Խաժակ Արք. Պարսամեանի կողքին էին Միլանոյի հայոց հոգեւոր հովիւ Տ. Տիրայր Վրդ. Յակոբեան եւ Տ. Պասկ Վրդ. Թեպիրճեան:

Նափուլի Արքեպիսկոպոսութեան ներքեւ, անոր էքիւմենիզմի ու միջեկեղեցական երկխօսութեան բաժանմունքին նախաձեռնութեամբ կազմակերպուած »Միասնութեան եւ խաղաղութեան շաբաթ«-ի շրջանակէն ներս տեղի ունեցաւ այս խորհրդաւոր արարողութիւնը, որուն մասնակցութիւն բերին բազմաթիւ կաթողիկէ հաւատացեալներ եւ Նափուլի բնակող հայեր:

Թեան ընթացքին Խաժակ Արքեպիսկոպոս խօսք ուղղեց ներկայ հաւատացեալներուն: »Քրիստոնէական միութեան որոնման մէջ կարեւորագոյն հաստատումներէն մին այն է, որ Քրիստոս ներկայ է իւրաքանչիւր հաւատացելի եւ իւրաքանչիւր եկեղեցւոյ մէջ: Երբ բոլորս »կը մնանք« Քրիստոսի ներկայութեան մէջ, այդ պարագային որեւէ եկեղեցի կամ ոեւէ քրիստոնեայ կը դադրի օտար ըլլալէ: Այդ միութիւնը մարդոց կողմէ չէ ստեղծուած: Ուստի մարդիկ չեն կրնար մերժել այն: Սա Աստուծոյ պարգեւն է:

Սրբազանը անդրադարձաւ առաքելական քրիստոնեայ եկեղեցիներու տարբերութիւններուն, որոնք պայմանաւորուած են մշակութային առանձնայատկութիւններով, աւետարանական այս կամ այն ճրձարտութեան շեշտադրումներով, պաշտամունքի ինքնատիպ ձեւերով եւ այլն: Այս բոլորը գործօններ են, որոնք յաճախ կը հարստացնեն Քրիստոսի եկեղեցին: Բայց եւ այնպէս, ան ցաւով մատնանշեց, որ գոյութիւն ունին աւերիչ բաժանումներ: Տ. Խաժակ Արք. Պարսամեան ընդգծեց, որ բաժանումէն դէպի միութիւն ճանապարհի կարեւորագոյն ուղին չէր այն հաւատքն է, թէ Քրիստոս կը բնակի մեզմէ իւրաքանչիւրին մէջ:

Նափուլի միջեկեղեցական արարողութեան ժամանակ Նորին Սրբազնութիւնը ընդգծեց, որ որեւէ առաքելական եկեղեցի չունի Քրիստոսի ներկայութեան եւ զօրութեան մենաշնորհը: Հայ Եկեղեցւոյ հիմնադիր Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որ ճանչցուած ու սրբադասուած է բոլոր աւանդական եկեղեցիներուն կողմէ, այս ուղղութեամբ հիասքանչ օրինակ մըն է: Սա ի յայտ կը բերէ, թէ ինչպէս գանազան եկեղեցիներ կրնան միաւորուել սուրբի մը վկայութեան շուրջ:

Տ. Խաժակ Արք. Պարսամեան եզրակացնելով իր պատգամը մաղթեց, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ բարեխօսէ եւ իր կեանքի օրինակով առաջնորդէ բոլորը՝ միութեան մասին քրիստոնէական ընկալման վերաբեւորման, որպէսզի քրիստոնեաներու խօսքի եւ գործի միջոցաւ տեսանելի դառնայ անոնց միութիւնը Քրիստոսով ի փառս Ամենասուրբ Երրորդութեան:

Նափուլի պատմական եւ նշանաւոր այս եկեղեցին, որու անունը Իտալացիները San Gregorio Armeno կը կոչէն, 1579 թուականին օծուած է: Երեկոյեան սկզբնաւորումը կը թուագրուի 8-րդ դարուն: Ըստ պատմական տուեաններու, Պոլիսէն փախած խումբ մը հայ կոյսեր հաստատուած են Նափուլի մէջ՝ իրենց հետ տանելով Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքները: Աւելի վերջ, այդ մասունքները ամփոփուած են ի պատիւ Հայոց հայրապետի կառուցուած այդ եկեղեցւոյ մէջ ու ան դարձած է՝ քաղաքի հովանաւոր սուրբերէն մին: Դարերու տեւողութեան եկեղեցւոյ յարակից վանական համալիրէն ներս հիւրընկալուած են զանազան միաբանութիւններ, բայց միշտ պահպանուած են հեռուոր հայակունքները: Ի հաստատումն այդ փաստի՝ 2015 թուականի ապրիլին վերաբացուած էր այս եկեղեցւոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի յիշատակին ձօնուած մատուռը, ուր շուրջ հինգ դարեայ բացակայութենէն յետոյ վերագետեղուեցան Լուսաւորչի մասունքները Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոս, Նափուլի կարտինայի եւ Հայաստանի Հանրապետութեան նախաքահի ներկայութեամբ:

Միջեկեղեցական արարողութեան

Ստացուած Գիրքեր

«Ազգէն Ամերիկա» Զարմինէ Պողոսեան (Յօդուածներու եւ բանաստեղծութիւններու ժողովածու)

« Ս փ ի լ ո թ » գիտաուսումնական կեդրոնի կողմէ 2021ին երեւանի մէջ լոյս տեսած այս հատորը կը բաղկանայ 440 էջերէ, 300 օրինակ տպաքանակով:

Վաստակաշատ կրթական մշակ եւ գրող Զարմինէ Գեորգի Գալայճեան - Պողոսեանն աշխատակցած է սփիւռքահայ մամուլին եւ արժանացած մրցանակներու, պատուոյ գնահատագրերու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանին:

ՀԱՐՄԻՆԷ ՊՕԼՈՍԵԱՆ

«ԱԶԳԵՆ ԱՄԵՐԻԿԱ»

ՀՅՈՒԴԱԾՆԵՐՈՒ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԺՊՈՂՎԱԾՈՒ

Պարսք Երկրի Դարեհ Թագաւորի Բագահաստանա -Բրիտանոնի Արձանագրութիւնը

Հայութիւնը մութ դարերից եկող մեծ խորհուրդ է, որին պէտք է մօտենալ վախով, սիրով, հաւատաւոր սրտով եւ մոլեռանդ յանդգնութիւնով
Կոստան Զարեան



ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Բագահաստանա-Բրիտանոնի «Աստուածների Բնակավայր»-ը գտնուում է Իրանի Կրմանշահ քաղաքից 36 կմ արեւելք, Բրժիստուն գիւղից 4 կմ հիւսիսի կիրճում, Արտագու գաւառից հարաւ (Աւարայրի Դաշտ): 152.5 մետր բարձրութեամբ մարմար ժայռի երեսն է սրբատաշուած, որի ընդհանուր մակերեսը կազմում է 172 քառակուսի մետր: Նրա երեսին եռալեզու արձանագրութիւն է փորագրուած: Դարերի հողմերի, արեւի կրակ լոյսի դէմ անասան կանգնած այդ կիրճի ժայռը... յուշարձան է: Այն իր հետ տանում Պարսկաստան երկրի հզոր արքայ՝ Դարեհ I-ի նուաճումների, տիրակալած երկրների հետ մղած քաջ գործերի փառաբանման հրավառութիւնը:

Արեւն էր իջել կիրճի մարմարեայ երեսը շոյելու, այնտեղ փորագրուած նշանակագրերը վառում իր ծիածանի կարմիր լոյսերով, լոյսի անուշ ցոլքեր ցօղում ժայռի առաջ խմբուած բազում մարդկանց գուարթ դէմքերին: Այնտեղ էին նաեւ մօտակայ Թադէի (Թադէլուս Առաքեալ) վանքի տօնակատարութեանը եկած բազում ուխտաւորներ, կարծես ուխտի եկել նաեւ այդ մարմարէ յուշարձանին: Ապշահար նայում էին նրա սրբատաշ երեսի երեք սիւնակների հազար երկու հարիւր տողերի արձանագրութեան գեղեցիկ ու հրաշագեղ շարքերի նշանագրերին: Արձանագրութիւնը դրուագուած է պատկերաքանդակներով, կեդրոնում քանդակուած է մարտերում պարտուած երկրների առաջնորդների ատեանի տեսարանը: Ուտաւորները՝ դէմքերը վեհապանծ ժայռի երեսին յարած, գանցկալի դիտում նրա վրայ փորագրուած նշանները՝ սեպագրերը: Անձկութեան յոյզի լոյս էր հոսում նրանց ակներից, անհամբեր իմանալու ժայռի երեսին գամուած նշանների իմաստի բովանդակութիւնը: Հին աշխարհի՝ Եգիպտոսի, Բաբելոնի, Ասորեստանի, Արմինա-Ուրարտու երկրի Արամ-Արամէի տոհմից Արա-Արայան թագաւորների ստեղծած արձանագրութիւններից ամենածաւալուն ու ամեներկարն է այն: Օտար այցելուներին խմբի մի մարդ, ուխտաւորների համար անհասկանալի լեզուով, ժայռի վրայ գամուած արձանագրութեան բովանդակութեան ու նրա պատուիրատու

ուր մասին հակիրճ տեղեկութիւններ էր հաղորդում: Ուխտաւոր Արմինա-Հայերը, ակներից ժայթքած լոյստա ժպիտով, խորին ակնածանքով ունկնդրում էին, իրենց խմբի տարեց աւագի՝ Դարեհ թագաւորի արձանագրութեան մասին պատումը: Հաւանաբար նա տեղեկ էր արձանագրութեան բովանդակութեան մասին եղած հրապարակումներին: Բոլորը-բոլորը ակնապարար նայում ժայռի երեսին, ուշադիր լսում աւագի կողմից Դարեհի արձանագրութեանը նուիրուած հրաշունչ ՆԵՐՔՈՂԻ նման խօսքը ժամանակին կարծել էին, որ ժայռի երեսին գամուած սեպագրերը մեհենական նշաններ էին: Տեղացի մարդկանց ու ճանապարհորդներին ծանօթ էր այն: Մինչեւ տասնըիններորդ դարը նրա բովանդակութեանը տեղեկ չէին եղել: Յոյն հին հեղինակներ, հաւատարմով հնամէնի գրոյցներին, արձանագրութիւնը առասպելական Շամիրամ թագուհուն էին վերագրել:



Այդ նենգ ու վավաշոտ կնոջն էին նաեւ վերագրել Արմինա-Հայաստան արարչական երկրի Արայ-Արայեան տոհմի արքաներ՝ Մենուայի եւ նրա նախնիների ու յաջորդների արարած ջրանցքների ու մայր ոստանի արարումը, որ երկրի շէներին ու դաշտերին Նար Մովինար աստուածուհու արարած ջրերը հոսէին: Շամիրամի ցանկասիրութեան պատերազմ Արմինա երկրում, Արամ Նահապետի որդի՝ Արա Գեղեցիկ թագաւորին տիրելու եւ նրան իր երկրի գահին

բազմեցնելու համար: Մարտում ընկնում է Արան, նրա դին թողնում են անթաղ, որ Յարալեգ աստուածները նրա վէրքերը լիցքելով կենդանացնէին: Մարդու կեանքի յարութեան հնագոյն հաւատք, որը հազար-հազար տարիներ յետոյ հեռու հարաւի երկրում աւանդուած պատումի համաձայն պիտի իրականանար, թէ՛, անգիտակ մարդկանց իրենց նոր հաւատքի ճշմարտացիութեանը համոզելու համար էր այն աւանդուել: Նոր հաւատքի հիմքն էր այն, առանց որի ու երկրորդ կեանքի աւետման... առասպել կը լինէր այն:

Մարմարէ ժայռի երեսին փորագրուած սեպագիր նշանները ընդօրինակել ու վերծանել է՝ Իրանում ռազմական խորհրդատու՝ բրիտանական սպայ Հէնրի Կրեսուելի Ռոուլինսոնը: Նրա վերծանումը նպաստել էր նաեւ արեւելքի միւս երկրների սեպագիր նշանների արձանագրութիւնները գաղտնագրածելու աշխատանքներին:

Մարմարէ այդ ժայռի սեպագիր արձանագրութիւնը պատուիրել է կատարելու Պարսկաստանի Աքեմենեան գահատոհմի 9-րդ գահակալ Դարեհ Ա. թագաւորը (մ.թ.ա. 522-486 թ.), որի բովանդակութիւնը իր վարած պատերազմների յաղթանակների եւ իր քաջ գործերի մասին էր: Այդ եռալեզու արձանագրութեան բնագիրը Պարսկական լեզուներով բովանդակութեան շարադրումները՝ Պարսկերէն լեզուից ուղղակի թարգմանութիւններ են: Պարսկերէն մասի բնագրում գրուած Արմինա անուան տեղում նրա յաջորդած արքատական թարգմանութեան մէջ գրուած է՝ Ուրաշտու, այսինքն՝ Ուրարտու (ը՛շ տարբերութեամբ), Ուրաշտու (Ուրարտու) անունը հոմանիշ եզր համարելով Արմինա երկրանունը: Իսկ էլամերէն լեզուի մասում նոյն Արմինա անունն տեղ գրուած է՝ Հարմինա, Արմինա անունն «հ» տառի հնչիւնի տարբերութեամբ: Դեռ հիմա էլ տարբեր անուանումներով պետութիւններ կան, որոնք հոմանիշ անուններով նոյն պետութիւններն են, ինչպէս նոյնը Արմինայի դէպքում:

Ինչո՞ւ են պատմաբանները յամառօրէն «պիւնդ» բռնել Ուրաշտու-Ուրարտու-ի «պոչից», այն համարում Արմինա երկրի տարածքում առանձին երկիր ու նրա բնիկներին էլ «Ուրարտացիներ»:

Եթէ Արմինան իսկապէս Ուրարտու-Ուրաշտու էր, Դարեհը ինչո՞ւ Պարսկերէն բնագրում Արմինա պիտի գրէր: Բաբելոնի ու Ասորեստանի բազում արձանագրութիւններում յիշատակուած Ուրարտու-Ուրաշտուն երկրի անունն է: Իրենց պատերազմած Արմինա երկրի լեռների գագաթների երախներից ժայթքած «կրակ» իմաստի թարգմանութեամբ նոյն երկրին տրուած «Կրակի երկիր» յորջորջուած անունն է: Պատմաբանները անգիտանում են, որ Դարեհի արձանագրութիւնում Աքեքատերէն «Ուրարտու-Ուրաշտուն» թարգմանութիւնն է «կրակ» իմաստով Արմինա երկրի եւ նրա բնակիչներն էլ «Արմիններ»:

Այդ նպատակադրուած է Արմին-Արմին-Հայերին համարելու եկուորներ եւ ոչ թէ այդ լեռնաշխարհի արարչական մարդիկ: Զարմանալի է, Հայերէնը համարում են Հնդեւրոպական մայր լեզուի առանձին լեզուախումբ,

նրանց բնակած լեռնաշխարհ-բարձրաւանդակը Հնդեւրոպական ժողովուրդների բնօրրան, իսկ նրա տեղի բնակիչներին եկուորներ: Աշխարհում շահն է ու անարդարութիւնը առաջնային, յետոյ ճշմարտութիւնը: Արմին ցեղի մարդիկ զգացմունքային ու բարեպաշտ են, իրենց պատմութեան ընթացքում բազում անգամներ անգիտացել այն, տանուլ տուել էին իրենց կուրը:

Յոյն իմաստուններ իրենց երկերում երբեք Ուրաշտու-Ուրարտու անունով երկիր չեն յիշատակել, իրենց ցեղակից Ար-արեւ աստուծոյ որդիներ Արմիններին՝ Արմէն, երկիրը Արմէնիա անուանել, բառամիջի «ի» հնչիւնափոխելով «է»:

Աքեմենեանների Դարեհ Ա. ի տիրակալութեան ատեն, նրա դէմ ապստամբել ու անկախացել էին Արմինա, Մարասան, Պարսք, Ասորեստան, Բաբելոն, էլամ, Պարթեւաստան, Եգիպտոս երկրները: Դարեհը, իր մղած 19 ճակատամարտում, ընկճել է նրանց դիմադրութիւնը: Նրա պատժիչ զօրքերին համառօրէն դիմադրել է իր Արմինա յիշատակած երկիրը, որտեղ ռազմական գործողութիւնները վարել են Հայագգի Դադարշիշ եւ պարսիկ Վահուսայի զօրավարները: Դարեհի արձանագրութիւնը պատմում է, որ իր երկրի իշխանութիւնը չճանաչող Արմինայի դէմ հինգ ճակատամարտեր է մղել, որոնցից երեքը իր բանակի հրամանատար՝ Հայագգի Դադարշիշի, իսկ երկուսը պարսիկ զօրավար Վահուսայի զօրքերի հետ: Ըստ արձանագրութեան պատումի, պատերազմը տեղի է ունեցել Արմինա երկրի Զագգա վայրում: Այդ կուրից քիչ ժամանակ անց, Արմինան երկրորդ ու երրորդ անգամներ ճակատամարտել է նոյն զօրավարի դէմ, այն էլ՝ Արմինայի ու Ասորեստանի սահմանին շատ մօտիկ վայրերում: Այդ հաստատում է, որ Արմինները համախումբ յաղթական մարտեր էին մղել պարսկական բանակի դէմ, նրանց հալածելով ու աստիճանաբար երկրից դուրս վանելով մինչեւ Ասորեստանի տարածքներ: Եւ, Արմինները, Պարսկաստանի դէմ իրենց չորրորդ ճակատամարտը արդէն մղել էին Արմինայի սահմաններից դուրս՝ Ասորեստանի տարածքի վրայ, Դադարշիշին փոխարինած Վաուսի-սայի գլխաւորած բանակի դէմ: Ըստ արձանագրութեան յիշատակութեան, զօրավար Վաուսի-սայի գլխաւորած բանակը նորէն Արմինա երկիր է ներխուժել եւ միայն հինգերորդ ճակատամարտում, կայսրութեան հսկայական միջոցներով կարողացել է ճնշել արմինների ապստամբութիւնը:

Դարեհի դէմ ապստամբած երկիրը «Արմինա» էր կոչուելու, եթէ այն իսկապէս «Արմինա» (Հարմինա)-(Արմանի) անունով երկիր եղած չլինէր: Առիթն է յիշատակել Մովսէս Խորենացու խիստ ճշմարիտ ու պատմական կարեւորագոյն արժէք ներկայացնող հետեւեալ վկայութիւնը՝

«Ամէնայն ազգ գաշխարհս մեզ անուանեն որպէս Յոյնք՝ Արմէն եւ Պարսիկք ու Ասորիք Արմնիք»

Դարեհի գրագիրը հաւանաբար Արամէագէտ եղած պիտի լինէր, կամ էլ Արամէացի, որոնք իրենց գրութիւններում բառամի-

Թրքատիպ, Թրքաբարոյ եւ Մասամբ Նորին...

Շարունակուած էջ 11-էն

կոյթին» ճանդէպ մեր ժողովուրդին ունեցած տկարութիւնը, որ ցուցանիչ է ինքնավստահութեան պակասի, սեփական արժէքներու ճանդէպ կասկածի եւ թրքական բարքերու նկատմամբ ցուցաբերած բղջարահոգութեան, այլ կը փորձեն մատնանշել աշխատանքի եւ պայքարի տարբեր ուղղութիւն մը, որ հիմնական է եւ կարեւոր, եւ անոր անտեսումով՝ թրքաբարոյ երեւոյթները կը շարունակեն գոյութիւն ունենալ, իսկ անոնց դէմ շղթայազերծուած պայքարը կը մնայ ամուլ:

Ինչպէս նշուեցաւ, թրքաբարոյ երեւոյթները չեն սահմանափակուիր միայն մշակութիւնը եւ տնտեսութեամբ: Անոնք ունին նկարագրային խորք, որուն դարմանումով միայն կարելի կ'ըլլայ լուծել հարցը: Թրքաբարոյ չե՞ն արդեօք եսակեղրոնութիւնը, հաւաքական կեանքէ խուսափումը, տարօրինակ իրարամերժութիւնը, անուանարկումները, բամբասանքը, «Թաղականին կնիկը» գործին եւ «Աբխազում աղաներու» խորքով կատարուած հանդիսութիւնները, աղայական ցուցամոլութիւնը եւ փաշայական իշխանատենչութիւնը: Թրքական կեանքի մնացորդացը չէ՞ արդեօք ազգային կորիզէն խուսափումը եւ հայրենակցական հարցերու նախամեծարումը: Թրքական կեանքի ազդեցութեան հետեւանքները չե՞ն արդեօք մեր ժողովուրդին կազմակերպչական անփութութիւնը, տհասութիւնը, անհատականը հաւաքականէն գերա-

դասելու անգիտակից մղումները: Երեւոյթներ՝ որոնք գոյութիւն պիտի չունենային, եթէ մեր ժողովուրդին մշակութային եւ քաղաքակրթական հոլովոյթը ունենար այլ զարգացում: Գոյութիւն պիտի չունենային, եթէ ներկան անցեալին հետ կամրջուէր մշակութային հայկական արժէքներով, իսկ քաղաքակրթական մեր հոլովոյթէն դուրս բերուէին թրքաբարոյ երեւոյթները: Այս երկու պայմանները անքակտելիօրէն կապուած են իրարու, իսկ զանոնք կարելի է միաձուլել՝ մշակութային ինքնութեան հաստատումով, մշակութային արժէքներու ժողովրդականացումով, մեր հաւաքական անհատականութեան բիւրեղացումով:

Այս առիթով, համացանցի եւ ընկերային ցանցերու «տիրակալութեան» այս օրերուն, յատկապէս շեշտը կը դնենք մշակութային արժէքներու ժողովրդականացման, անոնց համաժողովրդականացման պահանջին վրայ: Մեր ժողովուրդի դիմազրաւած այս պայմաններուն մէջ, ընտրանիական մշակոյթը լիւքս է եւ աննպատակ: Մշակոյթի ժողովրդականացման գուժահեռ, պէտք է բանալ ընկերային գիտակցութեան զարգացման էջը, որ պիտի նպաստէ մեր ժողովուրդին քաղաքակրթական հոլովոյթի բիւրեղացման:

Յատկապէս մեր դպրոցները շատ բան ունին ընելիք այս գծով: Իսկ մշակութային միութիւնները յատուկ կարեւորութեամբ պէտք է ընդգծեն առաջնահերթութիւնը ընկերային դաստիարակութեան: Այլապէս՝ բազում աղմուկ վասն ոչինչի:

Պարսք Երկրի Դարեհ Թագաւոր

Շարունակուած էջ 14-էն

Ղի ձայնաւորները չէին գրել: Արձանագրութիւնում մի քանի անգամ յիշատակուած «Արմնի» անուան «մ» եւ «ն» տառերի միջեւ չկայ «ա» տառը: Այն պէտք է կարգալ՝ «Արմանի»: Պարսիկները մինչեւ այժմ էլ թէեւ գրում են «Արմնի», սակայն այն հնչում ու գրում են «Արմանի»: Արմնիների երկիրն էր այն, մինչեւ մեր օրերին էլ շատ տարածուած է «Արման» անունը, իրենք էլ «Արմա» արորդիներ կոչել իրենց:

Արձանագրութիւնը յիշատակում է նաեւ, որ իր դէմ ապստամբել է նաեւ Արախս անունով մի Արմին՝ իտալիտայի որդին, թագաւորը Բաբելոնի, այսպէս՝ «Երբ ես Պարսկաստանում ու Մարաստանում էի, Բաբելոնցիները երկրորդ անգամ ապստամբեցին իմ դէմ, մի մարդ, Արախս անունով մի Արմին, իտալիտայի որդին, ապստամբեց Բաբելոնում: Դուբալ կոչուած մի վայրում նա ստեց ժողովուրդին (ասելով)՝ «Ես Նաբուգոդոնոսորն եմ՝ Նաբոնիտոսի որդին»: Ապա, բաբելական ժողովուրդը ապստամբեց իր դէմ եւ Արախայի կողմը բռնեց: Նա գրաւեց Բաբելոնը եւ դարձաւ թագաւոր Բաբելոնում»:

Ըստ արձանագրութեան վկայութեան, այդ «Մի Արմին»-ը

Թագաւոր

Խալդիտայի որդին էր: Խալդիտա անունը կազմուած է Արմինա-Ուրարտու-ի ազգային գերագոյն աստուած՝ Խալդի-ի անունից: Արձանագրութիւնում Արախս-ն յիշատակուած է մ.թ.ա. 520 թուականին, Ուրարտու անուանուած Արմինա պետութեան անկումից (590-585) 65-70 տարի յետոյ, եւ հաւանաբար Արախայի հայրը ապրած պիտի լինէր նաեւ նրա անկման օրերին: Եւ այդ Արմին-ը իր որդուն անուանել է Արմինա-Ուրարտու-ի գերագոյն աստուած Խալդիի անունով: Եթէ այդ Արմինը, Արմինա-Ուրարտուի հարազատ զաւակը չլիներ, կամ էլ Արմինա-Ուրարտուն կործանած մեղացիների հետ եկած թշնամի ու օտար ցեղի մարդ եղած լինէր, արդեօք Արախայի հայրը իր որդուն կ'անուանէր իրենց թշնամիների ազգային գերագոյն աստուած Խալդիի անունով՝ Խալդիտա: Անշուշտ, Խալդիտան ու Արախան Արմինա-Ուրարտուի Արմիններ էին: Արմինա-Ուրարտացիները Խալդիին պաշտած Արմիններ էին: Խալդին Հայկն էր՝ իրեն աստուած համարած ասուրաբաբելացիների տիրակալի դէմ պատերազմած Արմին-Հայը: Այդ Արմին-Հայը իր որդուն անուանել է Խալդիտա, ինչպէս հայերը իրենց որդիներին մինչեւ հիմա էլ անուանում են նաեւ Հայկ-ակ՝ Հայկ: (Շարունակելի)

Արփիար Արփիարեան

Շարունակուած էջ 12-էն

մանաւանդ մամուլով ան բուռն պայքարողն է սուլթանական ճնշումներուն դէմ: Ան եւս որոնած է ուղիներ հայոց փրկութեան համար՝ մերթ եւրոպական երկիրներ ուղղելով իր մտասեւեռումը եւ մերթ՝ Ռուսաստան: Սակայն, առաջնահերթութիւնը տուած է սեփական ուժերու համալրման, զին եւլ պայքարին եւ անկոտորում ոգիին: Իրեն համար ան վստահելի տարրեր էին քիւրտերը: Այս խիզախութիւնն ու համարձակ քարոզչութիւնը օսմանեան ոստիկանութեան աչքերէն չվրիպեցաւ անշուշտ: Սուլթանական հալածանքէն բաժին մըն ալ հասաւ անոր եւ ճաշակեց բանտն ու ապա կամաւոր աքսորը դէպի Եւրոպա (Ֆրանսա, Անգլիա, Իտալիա եւ հուսկ՝ Եգիպտոս): Իր հակաթրքական գրչապայքարը մղեց «Մարտ» եւ «Նոր կեանք» թերթերով: Իտալիոյ մէջ խմբագրեց «Հայ Հանդէս»-ը եւ ապա Եգիպտոսի մէջ «Շիրակ»-ն ու «Լուսաբեր»-ը: Ան խոր համակրանք ունէր Մեծն Մուրատի նկատմամբ: Ան յստակօրէն կը գրէ՝ «Հայաստանի խնդիրը Ռուսիոյ, Անգլիոյ եւ Թուրքիոյ խնդիրն է. մեր ուշադրութիւնը այս երեք պետութեանց շրջանակէն դուրս շատ չտարտոյնենք»:

Անտարակոյս, մենագրութեան ամենահետաքրքրական գլուխը չորրորդն է՝ «Արփիար Արփիարեանի կուսակցական Գործունէութիւնը» (էջ 157-222): Ինչպէս ծանօթ է, ան հնչակեան կարկառուն ղեկավար էր եւ Պոլսոյ մարմինին գործունեայ անդամներէն: Զինք համակրողներ կը միանային Հնչաեան կուսակցութեան, յատկապէս գրչի մարդիկ: Որպէս գործիչ գործած է բազմաթիւ ղեկավարներու հետ եւ նոյն իսկ տեսակցած հակասուլթանական թուրք տարրերու հետ, որոնց ատեւալառ էութիւնը կանխազգացած էր անմիջապէս: Կուսակցութեան ղեկավարներուն հանդիպած է Թաքուն այցելութիւններով Տրապիզոն, Թիֆլիս, Երեւան: Հնչակեաններու կազմակերպած Գում Գաբուի եւ Պապը Ալիի աղմկայարուց ցուցերէն ետք, Պոլսոյ իրականութենէն ներս մուտք կը գործէ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որմէ ետք կը սկսի կատարի պայքար երկու կուսակցութեանց միջեւ եւ բնականաբար Արփիարեան կը գտնուի առաջին շարքերուն վրայ: Անոր հակառակորդ կուսակցութեան անդամներ կեղծ փաստաթուղթով որպէս թրքական իշխանութեանց «մատնիչ» կը գրադարտեն զինք եւ ատեւութիւնը կը հասնի հոն, ուր 25 Դեկտեմբեր 1895-ին կը դաշունա-

հարեն զինք՝ ի սպառ լուեցնելու համար արի հրապարակագիրը: Այս տիրահաշակ պայքարին առաջնորդներէն էր գրող Մելքոն Կիւրճեան (Հրանդ): Հազիւ կը փրկուի ստոյգ մահէ: Սա առաջին մահափորձն էր իր դէմ: Ապա, ան կ'անցնի Լոնտոն՝ Հնչակեան կուսակցութեան մամուլը ղեկավարելու: Սակայն, ան շեշտուածօրէն հակաընկերվարական էր եւ սոցիալիզմը խորթ կը համարէր հայ իրականութեան: Ուրեմն կը սկսէր ներկուսակցական պայքարը 1896-էն սկսեալ, որուն պատճառով կը պառակտուէր կուսակցութիւնը: Այս պառակտումէն ծնունդ կ'առնէ նոր հնչակեաններու վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը 1898-ին՝ Աղեքսանդրիոյ մէջ: Աւելի ուշ, վերակազմեալներ իրենց հերթին կ'ունենան ներքին խռովութիւններ եւ դարձեալ առաջնագիծի վրայ է Արփիարեան: Ան կ'անցնի վենետիկ՝ խմբագրելու «Հայ Հանդէս»-ը: 15 Փետրուար 1903-ին, վենետիկի մէջ ան երկրորդ անգամ ըլլալով կ'ենթարկուի մահափորձի: Նորէն կ'ազատի ստոյգ մահէ: Արփիարեան, խրտչած ներքին պայքարներէ, կը հրաժարի վերակազմեալներէն ու կը հաստատուի Գահիրէ՝ ծաւալելու խմբագրական գործունէութիւն: Վահէ Արգունեանի գլխաւորած վերակազմեալներու թեւը կը շարունակէ հալածել զինք եւ 12 Փետրուար 1908-ին, Չորեքշաբթի օր նենգաբար կը տապալեն հայ մամուլի անգուզական մարտիկը, որ ոչ միայն ապրեցաւ ազգային ցաւերով, կեանքի բուռն վերվայրումներով, այլեւ՝ ճաշակեց թշուառութեան ու զրկանքի ամենադժին օրերը:

Տարբեր վայրերու հայ մտաւորականութիւնն ու գրասէր շրջանակները, մամուլի ու գրականութեան ներկայացուցիչները համատարած եւ յուզախառն կերպով դատապարտեցին եղբայրասպան այս նողկալի ոճիրը, որ կատարած էր ԱՄՆ-էն ժամանած անուս Պետրոս Հիւանեան կեղծ անձնագիրով մարդասպանը, որ հետագային պիտի գղջար ըսելով՝ թէ չէր գիտեր որու կը զգեստնէր սառնասրտօրէն: Արփիարեանի ի յիշատակ «Մշակ»-ի խմբագիր Համբարձում Առաքելեան կը գրէր՝ «Թուրքահայերի ամբողջ գրականութեան եւ մամուլի մէջ Արփիարը իր բոլոր հրապարակախօս իր նմանը չունեցաւ եւ չունի մինչեւ այսօր» (էջ 217):

Հեղինակը այս արժէքաւոր աշխատութեան համարօգ տուած է մամուլի եւ գրականութեան երկար ցանկէ մը: Հատորի վերջին կանգիրքին անգլերէն եւ ռուսերէն ամփոփումները:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel:-----
Email: -----

«Ռոման» Յաղթեց. Մխիթարեանը Դարձավ Կոլային Փոխանցման Յեղիմակ



Իտալիոյ ֆուտբոլի առաջնութեան 14-րդ հանգրուանին «Ռոման» ընդունած էր «Թորինոյին»:

Հռոմի Ողիմպիական մարզադաշտին վրայ կայացած խաղի մեկնարկի ընթացքին վնասուածքի պատճառով փոխարինուեցաւ «գալլերու» առաջատարներէն Փելլեկրինին: Առաջին կէսի վերջին մասին՝ ստանալով Մխիթարեանի փոխանցումը, Աբրահամը բացաւ հանդիպման հաշիւը: Երկրորդ կէսին արդիւնքը մնաց անփոփոխ եւ մայրաքաղաքային խումբը յաղթեց նուագագոյն հաշուով:

Հայաստանի ազգային խումբի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» հիմնական կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ խաղին:

Այս հանգրուանէն յետոյ «Ռոման» Սերիա Ա-ի աղիւսակին վրայ մնաց 5-րդ տեղը եւ ունի 25 միակէտ: Առաջատարները 32-ական կէտով «Նափոլին» եւ «Միլանն» են:

«Նափոլին» Ոչ Մէկ Առիթ Չտուաւ «Լացիոյին»՝ 4:0

Իտալիոյ առաջնութեան 14-րդ հանգրուանին առաջատար «Նափոլին» սեփական դաշտի վրայ մրցեցաւ հռոմէական «Լացիոյին» հետ: Իտալացի Լուչանօ Սպալետիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:

7-րդ վայրկեանին հաշիւը բացաւ դաշտի տէրերու լեհ կիսապաշտպան Պյոտր Զելինսկին, այնուհետեւ երկու կողմի հեղինակ դարձաւ պելճիգացի յարձակող Տրիս Մերտենսը: Վերջին վայրկեաններուն նափոլին չորրորդ կողմը խփեց սպանացի կիսապաշտպան Ֆաբիան Ռուիսը:

«Նափոլին» 35 միակտրով առաջինն է եւ 3 միակտր կը գերազանցէ երկրորդ տեղը ընթացող «Միլանին»: «Լացիոն» 8-րդն է՝ 21 միակտր:

Ռեալի Յաղթանակը «Սեւիլիայի» Դէմ

Սպանիոյ առաջնութեան 15-րդ հանգրուանին «Ռեալը» Մատրիտի մէջ մրցեցաւ «Սեւիլիայի» հետ: 2:1 արդիւնքով յաղթանակի հասաւ իտալացի Կառլօ Անչելոտիի գլխավորած խումբը:

Առաջինը յաղողութեան հասան հիւրերը 12-րդ վայրկեանին: 20 վայրկեան ետք «Ռեալի» ֆրանսացի յարձակող Քարիմ Բենզեմայի կողմի շնորհիւ հաւասարեցուցաւ հաշիւը, իսկ յաղթական կողմը 87-րդ վայրկեանին նշանակեց պրագիլացի յարձակող Վինիսիուս ձունիորը:

Ռեալը՝ 32 կէտով առաջինն է եւ 4 միակտր առաջ է երկրորդ տեղը ընթացող Մատրիտի «Աթլետիքոյէն»:

«Կադիսը» Հարոյեանի Հետ Պարտուեցաւ Ախոյեան «Աթլետիքոյէն»

Սպանիոյ առաջնութեան 15-րդ հանգրուանին ախոյեան «Աթլետիքոն» հիւրընկալուեցաւ «Կադիսէն»:



Արժենթինացի Տիէկօ Սիմեոնէի գլխավորած խումբը յաղթանակի հասաւ 4:1 արդիւնքով: Մատրիտեան ակումբէն աչքի ինկան ֆրանսացի կիսապաշտպան Տոմա Լեմարը, ֆրանսացի յարձակող Անթուան Կրիզմանը, արժենթինացի յարձակող Անիել Կոուեան եւ պրագիլացի յարձակող Մատեուսը:

«Կադիսի» հիմնական կազմին մէջ էր Հայաստանի հաւաքականի պաշտպան Վարադղատ Հարոյեանը, որ մասնակցեցաւ ամբողջ խաղին «Աթլետիքոն» 29 կէտով երկրորդն է եւ 1 միակտր է ետ առաջատար «Ռեալէն», որ մէկ հանդիպում նուազ ունեցած է: «Կադիսը» 17-րդն է՝ 12 կէտով:

«Չելսին» Ու «Մանչեսթըր Եունայթըտ» Հաւասար

Անգլիոյ առաջնութեան 13-րդ հանգրուանին առաջատար «Չելսին» ընդունեց «Մանչեսթըր Եունայթըտին» եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 1:1:

Թէեւ հսկայական տարածքային եւ խաղային առաւելութիւն ունէր գերմանացի թոմաս Տուխելի գլխավորած խումբը, սակայն առաջինը յաղողութեան հասան հիւրերը:



50-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ «Մանչեսթըր Եունայթըտի» անգլիացի յարձակող Ջեյդոն Սանչոն, որ իր առաջին կողմը նշանակեց Փրեմիեր Լիգայի խաղերուն: 64-րդ վայրկեանին անոր փոխարինեց փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալդուն:

69-րդ վայրկեանին «Չելսին» վերականգնեց հաւասարութիւնը իտալացի կիսապաշտպան Ժորժինիոյի 11 մեթրանոցի շնորհիւ:

«Չելսին» 30 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 1 կէտ առաջ է երկրորդ տեղի վրայ ընթացող ախոյեան «Մանչեսթըր Սիթիէն»:

«Մանչեսթըր Սիթին» Խնդիրներ Չունեցաւ

Անգլիոյ առաջնութեան 13-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթըր Սիթին» սեփական դաշտին վրայ մրցեցաւ լոնտոնեան «Ուեսթ Հեմ» խումբի հետ: Խոսեպ Գուարդիոլայի գլխավորած խումբը յաղթանակ արձանագրեց 2:1 արդիւնքով:

«Մանչեսթըր Սիթին» 29 կէտով հաւասարեցաւ առաջատար «Չելսիին», որը մէկ հանդիպում պակաս ունի:

«Լիվերփուլի» Տպաւորիչ Յաղթանակը՝ 4:0

Անգլիոյ առաջնութեան 13-րդ հանգրուանին «Լիվերփուլ» ընդունեց «Սաութհեմփթընին»:

Գերմանացի Եուրգէն Կլոպի գլխավորած խումբը տպաւորիչ յաղթանակ արձանագրեց 4:0 արդիւնքով:

«Լիվերփուլ» 28 կէտով երկրորդն է եւ առաջատար «Չելսիին» ետ է 1 կէտով:

ՊՍժ-ը Յաղթեց Սերիսի Ռամոսի Նորամուտի Խաղին



Ֆրանսայի առաջնութեան 15-րդ հանգրուանին առաջատար ՊՍժ-ն հիւրընկալուեցաւ աղիւսակի վերջին տեղը գրաւող «Սենթ Էթիէնի» կողմէ: Արձանթիցի մարզիչ Մաուրիսիօ Պոչետինօյի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով: Երեք գոլային փոխանցումներն ալ կատարեց Լիոնել Մեսիին:

ՊՍժ-ի կազմէն ներս նորամուտը նշեց 35-ամեայ իսպանացի պաշտպան Սերիսի Ռամոսը:

ՊՍժ-ն 40 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 14 կէտով առաջ է երկրորդ տեղը գրաւող «Նիցայէն»:

«Պայըրն» Յաղթեց Եւ Առաջին Դիրքի Վրայ Է

Գերմանիոյ առաջնութեան 13-րդ հանգրուանին ախոյեան Միւնխիի «Պայըրնը» ընդունեց «Արմինիային» եւ յաղթանակի հասաւ նուագագոյն արդիւնքով:

«Պայըրն» 31 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 1 կէտով առաջ է երկրորդ տեղի վրայ ընթացող Տորթմունտի «Պորուխայէն»: